


1102

7516


1668.4

92

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ



# ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԳ

ՅԵՐԵՎԱՆ 1928 թ.

338.98(47)  
Ա-76

338.98(47)

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԲՈՒԿ ԶԵՐԿՐԱՆԵՐԻ ՄԻԱՅԵՔ

U-76



# ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թարգմ. Վ. ԲԱԲՍՅԱՆ

16826



800  
27

80.800  
07-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 67

ՅԵՐԵՎԱՆ

1928 թ.

338.98(47)

U-76

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅԵՔ



# ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաք. Կ. ԲՍՍՍՅԱՆ

16826



888

80.888  
07-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 67

ՅԵՐԵՎԱՆ

1928 թ.

02 AUG 2013

22-270

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ 1300  
ԳՐԱՌԵՊ. 515 Բ. ՏԻՐԱԺ 500.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԳՐԱՆԻ ԳՐԱԳՐԱՆԻ  
ՀԱՍՈՒ-ԱՐՄ. ՀՐԱ. ՀՐԱ.  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱՆԻ  
ՀԱՍՈՒ-ԱՐՄ. ՀՐԱ. ՀՐԱ.

38183-2

ԳԼՈՒԽ III

### ՍՈՑԻԱԼԻՋՄԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 1. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

##### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Համաշխարհային պատերազմը մեր ժողովրդական տնտեսությունն ավելի յե քայքայել, քան վերին այլ յերկրինը: Բուրժուազիայից պրոլետարիատին ժառանգություն անցած ընդհանուր ավերածություն ու փլուզումին պիտի ավելայնս նաև յետամյա քաղաքացիական կռիվները, վերջ նույնպես ծանր կերպով անդրադարձավ մեր ժողովրդական տնտեսության վրա:

Այդ բոլորի հետևանքով խոշոր չափերով կրճատվեց արտադրությունը. նրա առանձին ճյուղերը միանգամայն զտարեցին, մեռան, մե քանիսը հողիվ հազ չնչում ելին, աշույկ, որինակ, 1920-21 թ. չուգունի հարումն ընկավ և հասավ մինչև նախապատերազմյանի 3%-ը: Տրանսպորտը բոլորովին քայքայվել էր և սպառնում էր կանգ առնել: Բոլորը հիշում են, թե ինչպես մեր դեպքները սողում ելին ու ստաչում: Բանխոր դատախարի հերոսական ջանքերի շնորհիվ միայն հասարակության վերականգնումը վերականգնել և վերջնական քայքայումից ազատել: Ուշոր չափերով ընկավ ու քայքայվեց գյուղատնտեսությունը. քաղաքացիական կռիվների վերջին՝ հաստատակների բերքը կաղմում էր նախապատերազմյանի 60%-ը: Սակայն ըննություն անելով ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերը—գյուղատնտեսությունն ու արդյուն-

նարեբությունը—պիտի նկատենք, վոր վերջինս ավելի շատ տուժեց, քան գյուղատնտեսությունը. արդյունաբերության արտադրությունն ընկավ՝ ավելի խոշոր չափերով:

Այդպես եր մեր ժողովրդական տնտեսության գրությունը, նախ քան մենք հնարավորություն կունենայինք խաղաղ շինարարության անցնելու: Այդ ժամանակից սկսած կուսակցության և խորհրդային իշխանության ամբողջ ուշադրությունը նվիրված է յերկրի արտադրողական ուժերի վերականգնմանը, քաղաքաված ժողովրդական տնտեսության բարձրացմանն ու ամրապնդմանը: Յեկ կամենիստական կուսակցության ղեկավարութեամբ, համեմատաբար կարճ ժամանակում, տնտեսական շինարարության ասպարեզում մենք խոշոր հաջողությունների հասանք: Մեկը-մյուսի հետևից դործի յեն գցվում դադրած գործարանները, կառուցվում են նոր ելեկտրոկայաններ, կարգավորվում և արանսպարաը, արադ թափով դարգանում և սպրանքաշրջանառությունը: Արդյունաբերության վերականգնման հետ դեպի արտադրությունն և քաղվում գյուղերում ցրիվ յեկած արդյունաբերական պրոյեկտարիտոր: Ներկա տարում (1927 թ.) խոշոր արդյունաբերության մեջ դրադված բանվորության ընդհանուր թիվը կգերազանցի նախապատերազմյանին: Բանվոր դասակարգի նյութական գրությունը տարեց-տարի բարելավվում է: Սկսած նոր տնտեսական քաղաքականության կիրարկության տարիներից գյուղատնտեսությունն անընդհատ բարձրանում է: Գյուղը արադ կերպով վերականգնվում է: Բազմամիլիոն գյուղացիության բարեկեցությունը աճում, բարձրանում է:

Կապիտալիստական և՛ վոչ մի յերկրի ժողովրդական տնտեսությունն այդպես արադ ու այդպիսի հաջողութեամբ չի վերականգնվել, ինչպես պրոյեկտարական ղեկատուերայի յերկրինը: Առանց ստարերկրյա փոխառությունների, առանց վորևե կողմնակի ունության, կապիտալիստական պետությունների թշնամական վերաբերմունքի պայմաններում, բացառապես սեփական ուժերով, մենք վերականգնել ենք մեր ժողովրդական տնտեսությունը:

Հետեյալ գիտադրամը տալիս է մեր տնտեսության աճման ընդհանուր պատկերը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՎՈՒՄԻՔՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՍՎՍԱՆ % - ՆԵՐՈՎ՝ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԸՆԴԱՆՈՒ ՔԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՍՎԱՄ



- Այս ավյալներից (տե՛ս գիտադրամը) հետևում է.
1. Ամբողջ ժողովրդական տնտեսությունն աճում է համաչափ ու անչեղ կերպով, 1927 թ. հասնելով նախապատերազմյան չափերին (99,6%) :
  2. Գյուղատնտեսության արտադրանքը, վոր 1923-24 թ. կազմում էր նախապատերազմյանի 69%-ը, 1926-27 թ. հասել է արդեն 93,6%-ի այսինքն, միայն 3 տարվա ընթացքում ավելացել է 1½ անգամ: Սակայն, գյուղատնտեսության համեմատութեամբ, արդյունաբերությունն աճում է և՛ ավելի արադ թափով: Արդյունաբերության արտադրանքը սկսած 1923-24 թ. մինչև 1926-27 թ. ավելացել է 2 անգամ և գերազանցել է նախապատերազմյան չափերին:

3. Արդյունաբերութեան արագ զարգացման համեմատ մեծա-  
նուամ է նաև նրա տնտեսարար կշիռը ամբողջ ժողովրդական տըն-  
տեսութեան մեջ: Ժողովրդական տնտեսութեան ընդհանուր ար-  
տադրանքի գումարի մեջ արդյունաբերութեան մասը, վոր 1923-24  
թ. կազմում էր 25,8%, 1926-27 թ. հասել է արդեն 36,73%-ի:

Տնտեսական շինարարութեան այս կարճ ժամանակամիջու-  
ցում մենք կարողացել ենք գյուղատնտեսութեան և արդյունաբե-  
րութեան արտադրանքը հասցնել նախապատերազմյան մակարդա-  
կին:

Տնտեսական շինարարութեան մեր անցած ուղին անվանում են  
ժողովրդական տնտեսութեան վերակազմման շրջան: Իսկ այն  
չըջանք, վորն այժմ մենք ենք թեևակոխում, նախկինից  
տարբերելու համար կոչում են վերակառուցողական շրջան, այ-  
սինքն, մի շրջան յերբ ժողովրդական տնտեսութեանը վերանորոգ-  
վում, վերասարքավորվում է «գիտութեան ու տեխնիկայի վերջին  
ստորի համաձայն»:

Ամենից առաջ մեր արդյունաբերութեանը, կազմակերպչական  
ընդգամում, յենթարկվեց հիմնական վերակառուցման: Արդյու-  
նաբերութեան կազմակերպութեան ու կառավարման յեղանակը մի-  
անգամայն նորից և կուռցված: Այդ տեսակետից կապիտալիզմից  
մեզ վոչինչ չի մնացել: Մեր տրեսներն ու սինդիկատները միայն  
անունով են հիշեցնում կապիտալիստական ժամանակաշրջանի հա-  
մանման միութեաններին, իսկ իրենց նպատակներով ու բովանդա-  
կութեամբ նրանք սոցիալիստական կազմակերպութեաններ են հան-  
գիտանում:

Հետո, ժողովրդական տնտեսութեան վերակազմման շրջանում  
նաև տեխնիկական վերակառուցման սկիզբն է դրվել: Այդ ընա-  
գամում, մենք ունենք մի քանի, ճիշտ և, տակավին վոչ աչի-  
քան խոշոր նվաճումներ, 1920 թվից սկսած կիրարկվում է, Լենին-  
ի կողմից նշած, յերկրի ելեկարիֆիկացիայի ճրագիրը: Արդեն  
կառուցված են և գործում են Վոլխովստրոյի, Շատտրկայի, Նի-  
ժեդորոզի, Շտերովկայի, Կաշիրի և մի շարք այլ խոշոր ելեկար-  
կայանները: Նախապատերազմյան շրջանի համեմատութեամբ և-  
յեկտորական ենեղիայի գործադրութեանը մեծացել է 1½ ան-  
գամ: Տորֆի հանույթը մեքենայական նոր յեղանակով (հիդրո-  
տորֆ) գերազանցել է նախապատերազմյան մակարդակին: Ռեժե-

ղացել է մեքենաշինարարութեանը: Տեխնիկական վերակառուց-  
ման սաղմերը նկատվում են նաև գյուղատնտեսութեան մեջ: Վեր-  
ջինս կառավրվում է ավելի կատարելագործված յեղանակներով.  
նրա մեջ մեքենաներն ավելի ու ավելի յեն կիրարկութեան գտնում  
(տրակտոր, խոտհար, քամհար և այլն), բարձրացել է տեխնիկա-  
կան մշակույթների արտադրութեանը (բամբակ, կանեփ, կաավ-  
ստ, ճակնդեղ և այլն): Աճել է անասնապահութեանը, շատ շըր-  
ջաններում տնտեսութեան յետամնաց յեսաղաչտյան սիտեմին  
փոխարինել է բազմաղաչտյան սիտեմը:

Հասկանալի յե, վոր այս բոլորը տակավին առաջին քայլերն  
են միայն, վերակառուցման այն աշխատանքների սկիզբը միայն,  
վորը մենք սխալ կատարենք, և վորի գլխավոր խնդիրները առա-  
ջիկայումն են տակավին:

Ընթացիկ տնտեսական տարում արդյունաբերութեան յեղած  
սարքավորման ողտադործումը մենք իր սահմանին հասցրինք: Բո-  
լոր Ֆարրիկաներն ու գործարանները արդեն գործի դրված և լիովին  
ծանրաբեռնված են: Արտադրանքի մեծացումը և տնտեսութեան հե-  
տադա աճումը հնարավոր է միայն արտադրական կմախքի, յայ-  
նացման հիման վրա, ամբողջ ժողովրդական տնտեսութեան տեխ-  
նիկական վերակառուցման հիման վրա: Դրան դուզընթաց, կու-  
տակվող միջոցները գլխավոր մասան կզնա հիմնական ֆոնդերը  
ուժեղացնելու համար, կմտցվի հիմնական շինարարութեան մեջ,  
այսինքն, կկառուցվին նոր ֆարրիկաներ ու գործարաններ և հիմ-  
նովին կվերասարքավորվեն հին ձեռնարկութեանները: Վերականգ-  
նրման շրջանում կուտակվող միջոցների գլխավոր մասան արդյու-  
նաբերութեան շրջանառութեան կապիտալ էր դառնում, իսկ վերա-  
կառուցման շրջանում այն գնում է մեծացնելու հիմնական կա-  
պիտալը: Դրա մեջ էլ կաշանում է վերակառուցողական շրջանի  
ընտրոջ առանձնահատկութեանը, վորով նա գտնադանվում է վե-  
րականգնման շրջանից:

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԻ ԱՃՈՒՄԸ ՄԵՐ ՄՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մենք տեսանք արդեն (տե'ս գլուխ II), թե ինչպե'ս տեղի ու-  
նեցավ մեր տնտեսութեան վերելքը, ի'նչ ուղղութեամբ գնաց նրա  
զարգացումը: Յերկրորդ գլխում բերած թվերից մենք տեսանք նաև  
թե ո'վ ամենից շատ ողտավեց այդ վերելքից:

Այդ տվյալներէց արդեն բոլորովն է այն հարցի պատասխանը, թե շարժում ենք մենք առաջ—դեպի սոցիալիզմը, թե՞ դեռ ենք հետ—դեպի կապիտալիզմը: Մեր ժողովրդական անտեսութեան աճում և պետարդյունաբերութեան զերի ուժեղացման ուղղութեամբ և սոցիալիստական տարրերի ամբողջումը՝ ի հաշիվ մասնավոր կապիտալի վտարման: Տնտեսութեան շինարարութեան ասպարիզում մենք դեպի առաջ, դեպի սոցիալիզմը խոշոր քայլ ենք արել:

### ՊԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽՆՉՄ-Ի ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ժողովրդական անտեսութեան վերականգնումը մենք սկսեցինք գյուղատնտեսութեանից, վտրովհետև գյուղատնտեսութեան վերականգնումով միայն հնարավոր էր արդյունաբերութեան վերականգնումը:

Այժմ հակառակը պիտի լինի. գյուղատնտեսութեան հետագա զարգացումը, առանց արդյունաբերութեան լայնացման՝ անհնարին կլինի: Մեր գյուղացիական հեռամնաց անտեսութեանը առանց տեխնիկայի արտադրութեան, առանց մեքենաների գործածութեանը դարկ առյուծ, հետագայում զարգանալ չի կարող: Եւ պետական խոշոր արդյունաբերութեան ոգնութեան կարիք և պիտի: Գյուղը իր բարեկեցութեանը բարձրացնել չի կարող, յետե քաղաքը նրան իր տեխնիկայով, իր մեքենաներով սղնութեան չլա: Դար համար էլ այժմ պիտի արդյունաբերութեանից սկսել, հենց դրա վրա պիտի դարձնել զլիսավոր ուշադրութեանը:

Մեր յերկրում սոցիալիզմի հիմնական բազան, հենակետը հանդիսանում է խոշոր պետական արդյունաբերութեանը: Առանց պետարդյունաբերութեան զարգացման, առանց նրա զեկալաբող զերը ամբողջ ժողովրդական անտեսութեան մեջ ամբողջելու, չի կարելի սոցիալիզմի կառուցման մասին մտածել: Գերակշիռ մանր գյուղացիական անտեսութեան (և այն էլ շափազանց հետամնաց) ունեցող մի յերկրում պետարդյունաբերութեանը նրան, նոր սոցիալիստական հիմունքներով վերակազմելու գործում խոշոր դեր է խաղում: Պրոլետարիատի զիկոտատուրայի պայմաններում, հոգի ազդալայնացման և անտեսական կյանքի իշխող բարձունքները պե-

տեսութեան ձևերում գտնվելու պայմաններում—գյուղացիական տնտեսութեան զարգացման այդ ճանապարհը լիովին հնարավոր է:

Մենք տեսնում ենք, թե պետական արդյունաբերութեանը ամբողջ ժողովրդական անտեսութեան մեջ ինչպիսի խոշոր նշանակութեան ունի: Այդ նշանակութեանը տարեցատրի ավելի ու ավելի կուժեղանա: «Սոցիալիստական շինարարութեան հիմնական նախադրյալը հանդիսանում է սոցիալիստական խոշոր արդյունաբերութեան տնտեսական զեկալաբութեան աստատումը յերկրի ամբողջ եկտնումիկայի վերաբերմամբ և առաջին հերթին նրա զեկալաբող և սոցիալիստերեն վերակազմող զերը գյուղացիական տնտեսութեան նկատմամբ, պրոլետարիատի թվի ու նրա ակտիվութեան աճումը և բանվոր դասակարգի գաշինքի ամբողջումը՝ գյուղացիութեան ամբողջ հիմնական մասույի հետ (XV կոսկոնֆերենցիայի բանաձևից):

Միայն այն զեկալում, յետե առաջիկայում էլ, տարեց տարի պետական արդյունաբերութեան աճումը կկատարվի ավելի արագ, քան ժողովրդական տնտեսութեան մյուս տարրերինը, միայն այն զեկալում, յետե նա կկարողանա իր հետեից տանել գյուղացիական տնտեսութեանը,—միայն այդ զեկալում կապահովվի մեր հետագա առաջխաղացումը զեկալ սոցիալիզմ:

### ՇԻՄՆԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ

Ահա թե ինչու՞ մեր արդյունաբերութեան բարգալաձման ու ծավալման և նոր ձեռնարկութեանների շինարարութեան հարցերը կուսակցութեան և խորհրդային իշխանութեան համար կալեռազույն նշանակութեան ունեցող խնդիրներ են դարձել: Վերն ասոցիինք, վար ժողովրդական տնտեսութեան տեխնիկական վերակառուցման ասպարիզում մենք արդեն վորոշ նվաճումներ արել ենք: Ժողովրդական տնտեսութեան իսկական վերակառուցումը սկսվում է հիմնական շինարարութեան հնգամյա ծրագրի կիրարկման հետ միտաին: Այդ ծրագրի համաձայն, 5 տարվա ընթացքում նախտեսվում են հետեյալ հիմնական հատկացումները:

Արդյունաբերութեան համար	4,950,000,000	»
Տրանսպորտի համար	3,840,000,000	»
Բնակարանային շինարարութ. համար	1,897,000,000	»
Ելեկարա-շինարարութ. համար	600,000,000	»
Գյուղատնտեսութեան համար	700,000,000	»

Հինգ տարվա ընթացքում մեր արդյունաբերությունը իր հիմնական կապիտալը կմեծացնի համարյա 5 միլլիարդ ուսրլով: 1930 թ. վերջին պետարդյունաբերության հիմնական կապիտալի արժեքը կմեծանա 65%-ով: Ըստ հնդամյա ծրագրի պետական արդյունաբերության մեջ գրավող կապիտալների ընդհանուր գումարը կանցնի 13 միլլիարդ ուսրլուց:

Հիմնական շինարարության հնդամյա ծրագրի կառուցված է մեր ունեցած սեալ հնարափորությունների մանրամասնորեն ստանալով հաշվառքի վրա: Այդ ծրագրի իրագործման հիմնական միջոցը հանդիսանալու յե պետական անտեսությունը ներսում տեղի ունեցող սոցիալիստական կուտակումը: Այդ ժամանակամիջոցում միայն լեռնարդյունաբերության մեջ տեղի ունեցող կուտակումը կկազմի մոտ 4½ միլլիարդ ուսրլի:

Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր այդ ծրագրի իրագործումը կապված է մի շարք դժվարությունների հետ, վորոնց խորհրդային իշխանությունը չեզոքացնել կարող է իր ամբողջ ուժերի լարումով միայն:

Մինչև այժմ դեռ մենք ապրում ենք ապրանքային սովի պայմաններում, չուկայում տակավին պայքվում է սոցիալիստական պետական ապրանքների մեծ պահաս: Մինչդեռ անտեսության հետագա աճման ընթացքը, վոր կապված է ժողովրդական անտեսության վերակառուցման հետ—դանդաղում է: Յեկ այդ հասկանալի յե սկզբում, վորպես յե յուկայում տակայինը ապրանքի քանակը, բավական էր, վոր մենք յանի պցելյինը անգործության մատնված ձեռնարկությունները: Այդ բանը, համեմատաբար, քիչ ծախք էր պահանջում է արագ կատարելն էլ հնարավոր էր: Այժմ, յերբ գոյություն ունեցող բոլոր ձեռնարկությունները ուժեղ կերպով ձանրաբեռնված են, ապրանքների արտադրության հետագա ավելացումը հնարավոր է այն դեպքում միայն, յեթե մենք կառուցենք նոր ձեռնարկություններ և ընդարձակենք հները: Իսկ պրա համար պահանջվում են խոշոր միջոցներ և յերկարատեղ ժամանակ: Ի հարկե, ապրանքային սովի վերացման ամենահասարակ միջոցը կլինի այն, վոր մենք վորոչ քանակի ապրանք ներմուծելինք արտասահմանից: Սակայն, մեր արտաքին առևտրի ասպարեզում մենք պիտի հետևենք հետևյալ կանոնին՝ քիչ ներմուծել և շատ արտահանել: Վորպես յե մեր հիմնական շինարարության համար պահանջվող անհրաժեշտ միջոցները չբեհան արտասահման, այլ այնտեղից դեպի մեզ գան, անհրաժեշտ է, վոր մեր եքսպորտը (արտածում, վորի համար մեզ են վճարում) գերազանցի յեմպորտի (ներմուծում, վորի համար

մենք ենք վճարում) գումարին: Հետևապես, արտասահմանից ներմուծվող ապրանքների քանակը սահմանափակված է մեր արտահանության քանակով:

Պետարդյունաբերության պահեստի կապիտալների անբավարար լինելը մեծ խոչնդատ է հանդիսանում հիմնական շինարարության ծրագրի իրագործման համար:

Ստարյերկրյա կապիտալիստները մեզ վարկ չեն տալիս, վորովհետե գիտեն, վոր այդ վարկերը պիտի գնան ամբողջելու պրոյետարական պետության անտեսական հզորությունը:

Մենք ստիպված ենք մեր հույսը միայն մեզ վրա դնելու, հետևապես ուրեմն խիստ խնայողությամբ վերաբերվել խորհրդային յուրաքանչյուր կողմին: Մենք պիտի մեր ծախքը կրճատենք՝ հասցնելով այն անհրաժեշտ միջինումի, վորպես յե հիմնական շինարարությանը կարողանանք տվել շատ միջոցներ տրամադրել:

Վերջապես, ժողովրդական անտեսության ակնհայտացման ասանց բարձրագույն ակնհայտացման մեծ արտադրանքների մեծ ամբողջ քանակ ունենալու անկարելի յե, վորոնցով, սակայն մենք այնքան ապրատ ենք: Պետության առաջ ծառայած է բարձրագույն և միջակ կրթության ունեցող ակնհայտացման ներառեչտ քնակաղմ պատրաստելու ինդիքը:

Մեր անտեսության աճման ինդիքների հետ կապված բոլոր դժվարությունները խորհրդային պետությունը կարող է հարթել յեր սեփական ուժերով: Ընթացիկ անտեսական տարում արդյունաբերության արտադրանքը, նախընթաց տարվա համեմատությամբ, կունենա 17-18%-ի հավելում:

Չնայելով անտեսության աճման դանդաղ ընթացքին, վոր կապված է ժողովրդական անտեսության վերակառուցման հետ, այնուամենայնիվ այդ աճումը պիտի համարել շատ նշանակալից: Բաժական և սեյ վոր նա, համենայն դեպս, 3 անգամ գերազանցում է նախապատերազմյան արդյունաբերության շախին: Կապիտալիստական և՛ վորչ մի յերկրի անտեսություն չի աճել այդպիսի արագ յեմպով: Այստեղ արդեն յերեան են յեկել մեր ժողովրդական տրտեսություն ծրագրային շինարարության առավելությունները: Այս տարի արդյունաբերության մեջ (էլեկտրոշինարարության հետ միասին) դրված միջոցները հասնում են յուր զուգարներին՝ 1,000 միլլիոն ուսրլու: Արդեն սկսված են Դնեպրոստրոյի, Սվերստրոյի և մի շարք այլ ուժեղ էլեկտրոկայանների և յուր զործարանների կառուցումները:

Տնտեսական շինարարութեան բնագալառում մեր ունեցած նը-  
վաճումները ապացուցում են, վոր կուսակցութեանն ու խորհրդ-  
գային իշխանութեանը տնտեսական ձեռն ջաղաքականութեան են  
վարում: Սա արդեն ինքնին մեծ առհասարակ յե, վոր մեր առաջ  
կանգնած յոյր դժվարութեաններին մենք կհաղթահարենք, ինչ-  
պես հաղթահարել ենք անցյալում, և կուսակցութեան ղեկավարու-  
թեամբ ժողովրդական տնտեսութեան վերակառուցման գործը հա-  
ջողութեամբ ի կատար կածենք:

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՈՊՈԶԻՑԻԱՆ

Մեր ամբողջ տնտեսական շինարարութեան մեջ սպողիցիան  
միայն խոչընդոտներ ու դժվարութեաններ և տեսնում և բնավ  
չի նկատում մեր նվաճումները: Նա իր գլուխը կորցրել է այն  
բոլոր դժվարութեանների հանդեպ, վորոնց մենք հաղթահա-  
րելու յենք, և միայն բղավում է այն մասին, թե մեզ կրանում  
է բուրժուական տարերքը: Սպողիցիան չի տեսնում կամ չի  
ցանկանում տեսնել այն հաջողութեանները, վորովիւր մենք  
ունեցել ենք սոցիալիզմի կառուցման ապարիզում:

Ըստ էութեան, սպողիցիան չհայացները, անխտանա-  
թեան են արտահայտում պրոխտարիալի ունեցած ուժի նը-  
կատմամբ: Նրանք Լենինից չառ են հեռանում և իրական  
փաստերի նկատմամբ ուղղակի հակասութեան մեջ են դանվում:  
XV կուսկոնֆերենցիայի բանաձևի մեջ, վորում դատարկու-  
վում է սպողիցիայի պարավորական դիմը, ասված է. «Յերկ-  
րի արտադրողական ուժերի զարգացումը, վոր տեղի յե ունե-  
ցել նոր տնտեսական քաղաքականութեան անցած տարիներում,  
ժողովրդական տնտեսութեան հասարակայնացված սեկտորի  
ավելի արագ աճումը մասնավոր-կապիտալիստականի համե-  
մատութեամբ, — այդ բոլորը յայնպէս կերպով հերքում են  
սպողիցիայի հայացները, վորը տնտեսական շինարարութեան  
առաջին քայլերին հանդիպած դժվարութեաններն ու խոչըն-  
դոտներն նկատում է վորպէս մեր յերկրում սոցիալիզմի հաղ-  
թական կառուցման անհարկիութեան ապացույց»:

Տնտեսական շինարարութեան բնագալառում մեր կու-  
սակցութեանը ամուր կերպով կապված է Լենինի ուսմունքին,  
վորի համաձայն սոցիալիզմի կառուցման համար անհրաժե-  
շտը մեր յերկրն ունի բավարար չափով: Սպողիցիայի տե-  
սակեան է, վոր մեր յերկրի ակնինիական ու տնտեսական  
հետամնացութեանը, սոցիալիզմի կառուցման համար հան-  
դիսանում են անհաղթահարելի խոչընդոտները: Նա շարունա-  
կում է պնդել, վոր մեր յերկրում սոցիալիզմի կառուցումը

անհնարին է: Մինչդեռ բանվոր դասակարգը կուսակցութեան  
ղեկավարութեամբ, իրադրածելով Լենինի պատգամները, սո-  
ցիալիստական հասարակութեան հիմքն է դնում: Այդ ապա-  
րկում բանվոր դասակարգը մեծ հաջողութեաններ յե հա-  
սել:

Փորձը յուր յե ապիս, վոր մենք կարող ենք սոցիալիզմ  
կառուցել և մենք այն կկառուցենք, շնայելով այն բոլոր դժվար-  
ութեաններին ու խոչընդոտներին, վորոնք այդ մեծ գործում  
կանգնած են մեր առաջ:

## 2. ՄԵՐ ՅԵՐԿՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ

### ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԻՆՊՈՒՍՏՐԻԱԼԱՑՈՒՄ ՅԵՎ ԿՈՊՊԵՐԱՑՈՒՄ

Ապրանքային սովը, վորը մենք ապրել ենք և վորպիսին վո-  
րոչ չափով զգացվում է և այժմ, թագնված է արդյունաբերու-  
թեան արտադրութեան և գյուղատնտեսութեան միջև յեղած ան-  
համաչափութեան մեջ: Սակայն արդյունաբերութեան և գյու-  
ղատնտեսութեան միջև գոյութեան ունեցող այդ անհամաչափու-  
թեանը նոր յերեվույթ չե. նա մեզ ժառանգութեան է մնացել  
հին կարգերից: Մինչև վ պատերազմը գյուղատնտեսութեան ընդ-  
հանուր արտադրանքը յերկու անգամ զերազանցում էր արդյու-  
նաբերութեան արտադրանքի արժեքին: Այդ ժամանակ սեփական  
արտադրութեան պահասը լրացվում էր արտասահմանից մեծ քա-  
նակութեամբ ապրանքներ ներմուծելով: Դրա շնորհիվ էլ ար-  
գյունաբերական ապրանքների առաջարկի ու պահանջի միջև  
ստեղծվել էր վորոչ հավասարակշռութեան:

Հոկտեմբերյան հեղափոխութեանից հետո այդ անհամաչա-  
փութեանը, յերկու հիմնական պատճառներով էլ ավելի ուժե-  
ղացավ: Առաջին—հողի ազգայնացումը գյուղացիութեան ազա-  
տեց մի շարք վճարումներից, տուրքերը կրճատվեցին, դրա հե-  
տևանքով էլ մեծացավ գյուղի պահանջը արդյունաբերական  
ապրանքների նկատմամբ: Յերկրորդ—նախապատերազմյան շը-  
ջանի համեմատութեամբ նշանակալից չափերով կրճատվեց ար-  
տասահմանից ապրանքներ ներմուծելը:

Մենք արդեն առաջինք, վոր ոտարերկրյա ներմուծումների  
առաջ մեր յերկրի սահմանները լայն բանալ չենք կարող: Դրա

համար ել գոյութիւն ունեցող անհամաչափութիւնն ու ապրան-  
քային սովը վերացնելու միակ ճանապարհը՝ սեփական արդյու-  
նաբերութեան արագ զարգացումն է: Յեղ այդ գիծն ել վերցրել  
է մեր կուսակցութիւնը: Իսկ այդ՝ յերկիրը ինդուստրիալացման  
յենթարկելու գիծն է:

Սորհրդային Միութեան ազգաբնակչութեան մեծամասնու-  
թիւնը գյուղացիութիւնն է: Ամբողջ յերկրում ներկայումս  
հաշիւում է մոտ 20 միլիոն գյուղացիական տնտեսութիւն: Գյու-  
ղատնտեսութեան ընդհանուր արտադրանքն իր չափերով գերա-  
զանցում է արդյունաբերութեան արտադրանքին: Մեր յերկիրը՝  
գյուղատնտեսական յերկիր է: Մեր քաղաքականութեան նպա-  
սակն է նրան արդյունաբերական, ինդուստրիալ դարձնել: Յերկ-  
րի ինդուստրիացում նշանակում է արդյունաբերութեան արագ  
զարգացում և ամբողջ ժողովրդական տնտեսութեան մեջ նրա դե-  
կավարող դերի ուժեղացում: «Ժողովրդական տնտեսութեան ին-  
դուստրիալացման ելութիւնը ժողովրդատնտեսութեան ամբողջ  
սիստեմի յերկու հիմնական ճյուղերի—արդյունաբերութեան և  
գյուղատնտեսութեան—տեսակարար կշիռի փոփոխման մեջ է կա-  
յանում: Ինդուստրիացման ժամանակ արդյունաբերութեան տե-  
սակարար կշիռը աճում է ի հաշիվ գյուղատնտեսութեան տեսա-  
կարար կշիռի»: (Կոնուր. թվեր):

Հասարակական կայանքում ինդուստրիալացիա բանվոր դա-  
սակարգի անչեղ աճում է նշանակում, նրա՝ մյուս գասակարգերի  
նկատմամբ ունեցած ղեկավարող դերի հետագա ամրապնդում է  
նշանակում:

Չեռնարկելով յերկրի ինդուստրիացման, առաջին հերթին  
մենք պիտի զարգացնենք ծանր արդյունաբերութիւնը և հասկա-  
պես նրա այն ճյուղերը, փորձնք մեքենաներ, դաղձահաներ, գա-  
նաղան ապարաններ ու մեխանիզմներ են արտադրում: Առաջին  
հերթին մեքենաներ արտադրելու գործի կարգավորելը մեզ հա-  
մար այն կարեւոր նշանակութիւնն ունի, վոր մենք կապահա-  
վենք մեր տնտեսական անկախութիւնը և այլևս կայսում չեմք  
ուրեմ կապիտալիստական յերկրներից: Սորհրդային Միութեանը  
արտադրութեան միջոցներ ներմուծող յերկրից, գարձնել այդ-  
պիսիք արտադրող յերկիր, —այդ է մեր տնտեսական քաղաքական-  
ութեան մտակա տարիների առաջնագույն նպատակը և այդ է  
մեր կուսակցութեան դիրքեկտիվները տնտեսական որգանքերին:

Մեր պետական արդյունաբերութիւնն ըստ իր սիւպի՝ սո-  
ցիալիստական արդյունաբերութիւնն է: Յեթե յերկրի ինդուս-  
տրիալիզացիան կատարվելու յի ի հաշիվ պետական արդյունա-  
բերութեան աճման, —այդ այդ կնշանակի, վոր մեր ժողովրդա-  
կան տնտեսութեան մեջ ամրապնդվելու յեն սոցիալիստական  
տարրերը: Մեր սոցիալիստական գիրքերը մենք կարող ենք ամ-  
րապնդել միայն ինդուստրիալիզացիայի միջոցով: Սրանից հետե-  
վում է, վոր մեր կուսակցութեան ղեկավարութեամբ տարվող  
յերկրի ինդուստրիալիզացման աշխատանքները հանդիսանում են  
սոցիալիզմի կառուցման աշխատանքներ կա:

Սակայն սոցիալիզմ, այդ կնշանակի այնպիսի հասարակարգ,  
վորի ժամանակ ամբողջ ժողովրդական տնտեսութիւնը հասարա-  
կայնացվում, կազմակերպվում ու տարվում է միասնական տնտե-  
սական ծրագրի հիմունքներով: Իրա համար ել սոցիալիստական ար-  
թիւնաբերութեան զարգացման զուգընթաց մեր առաջ կանգնած է  
ժանր ու ցրիվ վիճակում դանվող գյուղացիական տնտեսութիւն-  
ների միացման ու կազմակերպման, գյուղատնտեսութեան արտա-  
դրութեան հասարակայնացման նպատակը, վորովհետեւ միայն քա-  
ղաքում, գյուղից կտրված, չի կարելի սոցիալիզմ կառուցել: Սո-  
ցիալիզմը կարող է նս պիտի կառուցվի սոցիալիստական արդյունա-  
բերութեան և կազմակերպված ու հասարակայնացված գյուղական  
տնտեսութեան դաշինքի հիման վրա:

Ի՞նչ կերպ է տեղի ունենալու գյուղական տնտեսութեան սո-  
ցիալիստական սկզբունքներով կազմակերպելու դարձը: Վճճն է  
գյուղում սոցիալիզմի շինարարութեան ուղին: Այս հարցին սպա-  
սող պատասխան տվել է Լենինը: Նա ցույց է տվել, վոր գյուղում  
սոցիալիզմ կարող է կառուցվել բազմամիլիոն գյուղացիական մաս-  
սաների կոոպերացման միջոցով:

Իր «կոոպերացիայի մասին» հոդվածում, վոր հանդիսանում է  
քաղաքական կտակը կուսակցութեան, Լենինը գրել է. «Մեզ մոտ  
գոյութիւնն ունեցող կարգերում, կոոպերատիվ ձեռնարկները մաս-  
նափոր կապիտալիստական ձեռնարկումներից գանազանվում են  
վորպես կոլեկտիվ ձեռնարկումներ, բայց դրանք սոցիալիստական  
ձեռնարկումներից չեն գանազանվում, յեթե նրանք հիմնված են  
հողի վրա ու կատարվում են արտադրութեան այն միջոցներով, վո-  
րոնք պատկանում են պետութեանը, այսինքն բանվոր դասակար-  
գին»: Հետ Լենինը ցույց է տվել, «վոր մեր պայմաններում կու-

պերացրան միշտ և մեկն տեղ գուզադիպում և սոցիալիզմին» : Կո-  
ոպերացման յենթարկել գյուղական աղբարնակութիւնը , այդ այն  
է , ինչ վոր հարկավոր է ներկա ժամանակում : «Իսկ արտադրութեան  
միջոցները հասարակական սեփականութեան , բուրժուազիայի վրա-  
պրտութեամբ տարած դասակարգային հաղթանակի պայման-  
ներում՝ քղաքակրթված կոոպերատորների հաւարակարգն հենց սո-  
ցիալիզմի հասարակարգն է» : (Լենին) :

Կոմունիստական կուսակցութեան անշեղ կերպով աշխատում է  
կյանքում կիրառել Լենինի կոոպերատիվ ծրագիրը : Այդ կուսկոն-  
ֆերենցիայի բանաձևովում ասված է , թե «Գյուղում սոցիալիզմ  
կառուցելու հիմնական ուղին այն է , վոր պրտութեամբ ձեռքին  
դրնով պետական , վարկային հիմնարկութեանները և այլ իշխող  
բարձունքների սոցիալիստական արդյունաբերութեան կողմից տեխ-  
նիկան աճող ղեկավարման պայմաններում՝ կոոպերատիվ կազմա-  
կերպութեան մեջ քաշվի գյուղացիութեան հիմնական մասան և  
ապահովվի այդ կազմակերպութեան սոցիալիստական դարգացու-  
մը՝ նրա կապիտալիստական տարրերն ողտաղործելով հաղթանա-  
բելով դուրս մղելով» :

Յեկ այսպիս , ինդուստրիալիզացիա ու կոոպերացիա , — աս-  
մեր յերկրում սոցիալիզմի կառուցման հիմնական ուղիները :

### ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑԻԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Կուսակցութեան վարած զինք՝ յերկիրն ինդուստրացման յեն-  
թարկելու համար վոչ միայն չի հակասում գյուղացիութեան հիմ-  
նական մասայի շահերին , այլ ուղղակի գուզադիպում է նրան  
Յեկ , իրոք , ինդուստրիալիզացիան կեժանացնի արդյունաբերական  
ապրանքների դները և կրարելով նրանց վորակը : Ինդուստրաց-  
ման ինդրում գյուղացիութեանը շահագրգռված է , վորպես արդյու-  
նաբերական ապրանքների սպասող , վորովհետև մեր արդյունա-  
բերութեանը գլխավորապես աշխատում է գյուղացիական շուկայի  
համար : Այս մեկ : Յերկրորդ , ինդուստրիալիզացիայի ժամանակ  
արդյունաբերութեան արագ աճումը կպահանջի բանվորական լրա-  
ցուցիչ ուժ : Այդ բանը հնարավորութեան կտա գյուղի աղբարնա-  
կութեան ավելցուկ ձեռքերին քաղաքում աշխատանք ունենալու  
Յերրորդ , գյուղացիութեանը ինդուստրիալիզացիայի խնդրում շա-  
հագրգռված է , վորպես արտադրող , վորպես քաղաքի դարգացոյ

38183-12

(16896)

արդյունաբերութեան հում նյութ մատակարարող : Ինդուստրիալի-  
զացիան գյուղական անտեսութեանը կտա սարքավորում և արտա-  
դրութեան ավելի կատարելագործված միջոցներ : Իսկ այդ շատ  
կարևոր է , վորովհետև ինքը , գյուղատնտեսութեանը իր հետա-  
գա դարգացման և մշակութեան ավելի կատարելագործված ձևերին  
անցնելու համար մեքենաների կարիք ունի :

Իր հերթին գյուղատնտեսութեան ինդուստրիալիզացումը ուժեղ  
թիվան կհանդիպանա գյուղատնտեսութեան արտադրութեան հասա-  
րակական ձևերի դարգացման համար :

Ընկ . Ռիկովը պատմում է , թե այդ տեսակետից գյուղում  
ինչ հսկայական աղբեցութեան և ունենում արակտորը : «Ահա  
հարցերի մի շարք , վորոնք հաջորդաբար առաջադրվում են  
տրակտոր դնած մեքենայական արտելին առաջին հարցը , վոր  
ծագում է , այն է՝ թե տրակտորը վարում է արդյոք  
ամբողջ դաշտը պահպանելով միջնակները թե՞ միան-  
գամից վարում է ամբողջ դաշտը , վորպես մի ամբողջութեան :  
Վերջինս ձեռնտու յե : Յերր հողը հերքված է , ծագում է մի այլ  
հարց , բաժանել հերկած հողը , թե՞ միատեղ ցանել և ապա  
բերքը բաժանել : Յերր ցորենը հասավ , բաժանել նա առանց  
հնձելու , թե՞ միասին հնձել և խուրձերը բաժանել : Յեթե  
հունձը կատարված է միատեղ , հարց է ծագում , բաժանել  
արդյոք խուրձերը , թե՞ միասին կայսել : Ապա միատեղ կայսե-  
լուց հետո , արդյոք ցորենը բաժանել ըստ անտեսութեաննե-  
րի , թե՞ կոոպերացիայի միջոցով վաճառել և վորը բաժանել :  
Այդպիսի մտքերով է սոցորվում գյուղացին , յերր արակա-  
րն և մտնում գյուղատնտեսութեան մեջ . . . » :

Առանց տրակտորի կիրարկման , առանց մեքենայացման , ա-  
ռանց գյուղատնտեսութեան արտադրութեանը տեխնիկական ավելի  
բարձր հիմունքների վրա դնելու , գյուղում սոցիալիզմ կառուցելու  
մասին խոսք լինել չի կարող : Գյուղացիական մասայի կոոպերա-  
ցումը միայն այն ժամանակ սոցիալիստական բնույթ կկրի , յեթե  
գուզընթացաբար կրարձրանա գյուղատնտեսութեան արտադրու-  
թեան տեխնիկան , յեթե այն տեղի կունենա գյուղատնտեսութեան  
ինդուստրիալիզացիայի հիմունքներով :

### ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԿՈՊԵՐԱՑՈՒՄԸ

Լենինը ուսուցել է , վոր բազմաթիվ գյուղացիական մասային  
կազմակերպել և սոցիալիստական շինարարութեան գործի մեջ մենք  
բաշել կարող ենք վոչ թե ստիպել , այլ յեթե



գործով ցույց տանք, վոր նոր ձեռով, սոցիալիստներն անտեսութեան վարելը դյուզացիութեան համար ձեռնտու չէ: Գյուզացիութեան պիտի կապկապել իր իսկ սեփական շահերով, դյուզացիութեանը պիտի տալ այնպիսի հասարակ ձև նրա համար մատչելի կազմակերպութեան, վորին մասնակցելով, նա փորձով համոզվի իր սեփական ոգտի մասին: Այդպիսի հասարակ և դյուզացիութեան համար մատչելի կազմակերպութեան ձևը՝ հանդիսանում է կոոպերացիան: Հենց հանձնիս կոոպերացիայի, գրում եր Լենինը, մենք պետք ենք մասնավոր շահը միացնելու միջոցը, նրան ընդհանուր շահին յենթարկելու միջոցը, ու հենց այդ պատճառով ել կոոպերացիան դյուզի համար, վորպես ուղղեցուցյց կծառայի գեպի սոցիալիզմը:

«Յուրաքանչյուր դյուզացիական անտեսութեան շահագրգռված է, վորպեսզի լավ և ձեռնտու պայմաններով վաճառի իր արտադրութեան մթերքները: յուրաքանչյուր դյուզացիական անտեսութեան շահագրգռված է, վորպեսզի ըստ հըր նարավորին եժան և ձեռնտու պայմաններով գնի իրեն համար անհրաժեշտ քաղաքային արդյունաբերութեան մթերքները՝ թե՛ աշպես կոչված սպտոդական պահանջի գծով (մանուֆակուրայի, կոշիկեղենի և նման այլ անմիջական գործածութեան արդյունքներ, և արտադրողականութեան պահանջի գծով (արտադրութեան ամեն տեսակի միջոցների դնում, ինչպես բարելաված սերմեր, դյուզատնտեսական գործիքներ և այլն): Ճիշտ նույնպես ել յուրաքանչյուր դյուզացիական մասնավոր, մանր անտեսութեան շահագրգռված է, վորպեսզի կարիքի դեպքում ըստ հնարավորին ունենա ավելի եժան վարկ: Յե՛վ ահա, այդ հանգամանքը, վորը վոչ միայն չի հակասում մասնավոր անտեսութեան շահերին, այլ սակայն այդ շահերից անմիջականորեն բղխում ու այդ շահերից թելազրկում է, այդ հանգամանքն է, վոր դյուզացիութեանը մղում է գեպի կոոպերատիվ միացութեան ուղին: Ճիշտ այդպես է յեղել ամենուրեք, ձիշտ այդպես է յեղել աշխարհի բոլոր յերկրներում» (Բուխարին):

Սակայն բուրժուական յերկրներում այդ կոոպերատիվ միութեաններն անհրաժեշտորեն մտել եյին խոչոր կապիտալիստական սխտեմի մեջ, ըստ եյութեան հաղիստում եյին խոչոր կապիտալի մի մասը և իրենցից սոցիալիստական վոչինչ չեյին ներկայացնում: Բուրժուական յերկրներում այլ կերպ ել յինն չէր կարող ձև չի լինի, ուր արտադրութեան բոլոր միջոցները, բանկերը, յերկաթուղիները

պատկանում են մի խումբ խոչոր կապիտալիստների, վորոնք ժողովրդական ամբողջ անտեսութեանը ծառայեցնում են իրենց շահերին և վորոնք իրենց ձեռքումն են պահում ամբողջ պետական իշխանութեանը: Մեր յերկրում պետական իշխանութեանը պատկանում է պրոլետարիատին: Տնտեսական կյանքի բոլոր իշխույ բարձունքները կապիտալիստների ձեռքից իրված են և բանվոր դատակարգի սեփականութեանն են հանդիսանում: Այս պայմաններում կոոպերացիայի դերը հիմնովին վորտե՛ս է:

«Յեթե դյուզացիական կոոպերատիվները, ընդհանրապես և ամբողջութեամբ, մտցնել պրոլետարական պետութեան անտեսական ուղղանների սխտեմի մեջ, այդ կնշանակի պրոլետարիատի անտեսական ղեկավարութեան, այդ կնշանակի պրոլետարիատի և դյուզացիութեան դաշինքի ամրապնդում, այդ կնշանակի, վոր մենք խոչոր քայլերով գեպի սոցիալիզմն յենք դնում» (Բուխարին):

Գյուզացիական անտեսութեանների կազմակերպման պրոցեսը կանգ չի առնում այն ձևերի վրա, վորպիսիք մենք գծեցինք վերը: Նա ավելի խորն է գնում և աստիճանորար կազմակերպում է դյուզատնտեսութեան ամբողջ արտադրութեանը: Գյուզացիք փորձով համոզվում են, վոր իրենց համար վոչ միայն ձեռնտու չէ դյուզատնտեսական մթերքները կոլլեկտիվ վաճառքը, այլ և ավելի ձեռնտու չէ այդ մթերքների կոլլեկտիվ արտադրելը: Իրենց մթերքների կոլլեկտիվ վաճառք կազմակերպելուց նրանք անցնում են արտադրութեան կոլլեկտիվ կազմակերպութեան: Սկզբում նրանք կոլլեկտիվներ ու ընկերութեաններ են կազմակերպում հատուկ մթերքներ միասին վերած շահելու համար, ինչպես կաթ, կարտոֆիլ, ճակնդեղ, կտավատ և այլն: Կազմակերպվում են ընդհանուր պանրագործարաններ, յուզագործարաններ, կարտոֆիլ վերամշակելու սուրյագործարաններ և մի շարք այլ կոլլեկտիվ ձեռնարկումներ:

Մյուս կողմից սոցիալիստական արդյունաբերութեան զարգացմամբ դյուզատնտեսութեան մեջ կավելանա տրակտորների և գանազան մեքենաների գործածութեանը, այդ հանգամանքը գորեզ իթան կհանդիսանա դյուզական անտեսութեան բոլոր ճյուղերը նոր կոլլեկտիվ սկզբունքներով կազմակերպելու համար:

«Ելեկտրոֆիկացիային անցնելով այդ պրոցեսը իր ավելի լրիվ ավարտումը կունենա: Այսպես, դյուզացիական անտեսութեանը դառնալով կազմակերպված սխտեմ, կսկսի ավելի ու ավելի աճել: Գյուզացիական անտեսութեանները ստանձնա-

ցած և ցար ու ցրելով վիճակից վեր են ածվում մեկ կազմակերպ-  
ված ամբողջութեան: Գյուղացիական անտեսութեանն են ա-  
տիճանաբար փոխում են իրենց սեփական բնույթը, համա-  
խմբվում են միասեղ և աճում միասնաբար, պետական ար-  
դյունաբերութեան հետ կազմելով մի ամբողջու-  
թյուն: Իսկ անտեսութեան ախորհնակ շղթան, վորն իր բո-  
լոր մասերում կազմակերպված է, ըստ էություն հենց սոցիալ-  
իզմ է» (Բուխարին):

### ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒՅՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Այժմ տեսնենք, թե գյուղում սոցիալիստական շինարարութեան  
լուսավառումը վորոնք են մեր ունեցած նվաճումները, և ամենից  
առաջ ի՞նչ գործնական հետևանքների յենք հասել մենք՝ կյանքում  
կոոպերատիվ ծրագիրը կիրարկելիս:

Բոլոր տեսակի նախնական կոոպերատիվների ընդհանուր թի-  
վը (առանց Ուկրաինայի) 1924 թ. 25 հազար էր. 1926 թ. այդ թի-  
վը արդեն հասել էր 33 հազարի, կամ աճել էր 29,6%-ով: Նրանց  
անդամների թիվը 2 միլիոնից բարձրացել էր 5,9 միլիոնի, կամ՝  
189,3%-ի:

Գյուղատնտեսական կոոպերացիան ընդգրկում է Խորհրդային  
Միության ամբողջ գյուղական անտեսութեանների 22,5%-ը: Իսկ  
կոոպերացիայի հատուկ տեսակները, միջին թվով, ընդ-  
գրկում են գյուղատնտեսական համապատասխան մթերքներ արտա-  
դրող (ծխախոտ, կաթնամթերքներ, ճակնդեղ և այլն) անտեսու-  
թյունների ընդհանուր թվի մոտ 50%-ը: 1925 թ. վերջին գյուղա-  
տնտեսական կոոպերացիայի միջոցների ընդհանուր գումարը հաս-  
նում էր 900 միլիոն ուրբլու: Սակայն այդ գումարից կոոպերա-  
ցիայի սեփական միջոցները կազմում էին միայն 130 միլիոն ուրբ-  
լի: Գյուղատնտեսական կոոպերացիան ունի 16 հազար դանադան  
տիպի մանր ու միջակ արտադրական ձեռնարկումներ:

Պիտի նշել, վոր մինչև պատերազմը գյուղատնտեսական  
կոոպերացիայի մեջ մասած գյուղացիական անտեսութեանների  
տոկոսը ավելի բարձր էր, քան այժմ: Այստեղից ինքնին հե-  
տևում է այն, վոր մենք պիտի ձգտենք դեպի գյուղատնտե-  
սական կոոպերացիան գրավել չքավոր ու միջակ մասսայի  
լայն խավերին, ամեն կերպ նպաստենք նրա կազմակերպմանն  
ու զարգացմանը: Մեր պայմաններում գյուղատնտեսական կո-

ոպերացիան գյուղի չքավոր-միջակ խավերի համար ունի հըս-  
կայական նշանակություն: Նա հանդիսանում է գյուղական  
հասարակայնացման հիմնական ձեւը:

Այդ իսկ տեսակետից մեր նպատակը պիտի լինի, վոր գյու-  
ղական անտեսութեանների թվական ընդգրկումով մենք վորչ  
միայն հասնենք այլև գերազանցենք նախապատերազմյան մա-  
կարդակին:

Ովքե՞ր են մասնակցում գյուղատնտեսական կոոպերացիային,  
սոցիալական վոր խմբերն են նրանում գերակշռում:

Կոոպերացիայի անդամների սոցիալական կազմը հետևյալ պատ-  
կերն ունի (տոկոսներով՝ առ կոոպերացված անտեսութեանների  
ընդհանուր թիվը) —

Լծկան-ագուրկ	26,3	} 77,8 չքավորական
1 դուրս լծկան ունեցող	51,5	
2 » » »	15,3	
3 » » »	5,2	
4 » » »	1,7	
	100%	

Այս ավյալներից պարզվում է, վոր գյուղատնտեսական կո-  
պերացիայի մեջ գերակշիռ դեր ունին չքավորական խմբերը: Կո-  
պերացված 100 անտեսութեաններից 93-ը կազմում են չքավոր-  
միջակ անտեսութեանները: Կոոպերացված հարուստ անտեսու-  
թյունների տոկոսը չնչին է: Այս ավյալները ցույց են տալիս, վոր  
գյուղատնտեսական կոոպերացիայի նկատմամբ մեր վարած քա-  
ղաքականությունը ճիշտ է, նկատի ունենալով այն պայքարը, վոր  
կուրակ ապրերը յերբեմն ծածուկ, յերբեմն բացահայտ կերպով  
մղում են գյուղի չքավորութեան դեմ: Այդ քաղաքականութեան  
էությունն այն է, վոր պետք է ոգնել չքավորին իրականացնելու  
ի դաշինքը միջակի հետ, պետք է դուրս մղել կուրակին, զրկել  
նրան գյուղացիութեան միջակ խավի վրա ունեցած իր ազդեցու-  
թյունից և կոոպերացիայի մեջ ապահովել գյուղի պրոլետարական  
մասի դեկավարութեանը:

1925 թ. կեսերին վարկային կոոպերացիան ընդգրկում էր  
ՆՍՀՄ-ի ամբողջ գյուղացիական անտեսութեանների 15,2%-ը:  
Վարկային կոոպերացիայի շրջանառութեան ընդհանուր գումարն  
այս 1-ն հուլիսի 1926 թ. կազմում էր 760 միլիոն ուրբլի: Նա,

գլխավորապես, վարկավորում է չբավոր ու միջակ անտեսությունները: Վարկային կոտակերացիայի խոչոր բացերից մեկը՝ գյուղացիական ավանդների չնչին լինելն է, վորը կապիտալի ընդհանուր գումարի 2%-ն կազմում միայն: Մեր նպատակն է լինելու գեպի վարկային կոտակերացիան ներգրավել գյուղացիության խնայողությունները:

Առ 1926 թ. ԽՍՀՄ հաշվում էր 22 հազար կոլլեկտիվ անտեսություններ, վորոնք ունեյին 1 միլլիոն անգամ, 3 միլլիոն գեսյատին վարկահոգ: Ըստ սոցիալական կազմի կոլլեկտիվներում գերակշռում են չբավորները: Արտելներում նրանք կազմում են անգամներ ընդհանուր թվի 74%-ը, կոմունաներում՝ 85%-ը, ընկերություններում՝ 50%-ը և միջակ անտեսությունների 49%-ը: Բոլոր տեսակի կոլլեկտիվների ընդհանուր աճման մեջ նկատվում է հասարակ միությունների (ընկերությունների) ավելի արագ աճում:

Գյուղատնտեսության մեջ պետական արդյունաբերությունն առայժմ չնչին մեծություն է կազմում, ընդամենը, 1,5% միայն (ստանց ձկնորսության և) անասառային տնտեսության) ընդհանուր արտադրանքի վերաբերմամբ, թեպետ և պետք է սանել, վոր վերջերս խորհրդային անտեսություններն աճում և) ամբարնդվում են:

1925-26 թվին Խորհրդային Հանրապետությունների ամբողջ Միության մեջ կային 5,706 խորհրդ. անտեսություններ 3,1 միլլիոն ցանքի տարածությամբ:

Գյուղատնտեսական մեքենաների տարածման աստիճանը գյուղում մի կողմից ցույց է տալիս, վոր նրա բարեկեցությունը բարձրացել է, իսկ մյուս կողմից մեքենաների, հատկապես տրակտորների բաշխումը մեզ պարզ պատկեր է տալիս այն մասին, թե ինչ ազդեցություն ունի ինդուստրիալիզացիան գյուղատնտեսական արտադրության հասարակայնացման վրա: Իներենք մի ազդու աղբյուր է տալիս գյուղատնտեսական մեքենաների ներքին արտադրության և արտասահմանից ներմուծման չափերը:—

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ.

ՏԱՐԵ-ԹՎԵՐ	Մ Ի Լ Ի Ո Ն Թ Ո Ի Բ Լ Ի Ն Ե Ր Ո Վ				
	Ներքին արտադրություն	Ներմուծում	Դրանից արկատորնի ներմուծում	Ընդամենը	Ընդամենը %-ով 1913 թվի վերաբերմամբ
1913	67	48,7	—	115,7	100
1923—24	16,8	6,2	—	23	19,8
1924—25	39,9	32,2	10,7	72,1	62,3
1925—26	68	51,5	18,5	119,5	103,3

Այս ազդու աղբյուրից յերեվում է, վոր գյուղատնտեսական մեքենաների և ներմուծման քանակի և ներքին արտադրության քանակի տեսակետով՝ 1925-26 թ. մենք նախապատերազմյան մակարդակից առաջ ենք անցել: 1925-26 անտեսական տարում մեր գործարաններում շինված է 847 տրակտոր, իսկ սույն անտեսական տարում ձրագրված է բաց թողնել սեփական արտադրության 1,320 տրակտոր:

Տրակտորների բաշխումն հետևյալ պատկերն ունի:—

Բոլոր տրակտորների	64,8%	պատկանում է կոտակերացիային
»	32,8%-ը	» » պետության
»	2,4%-ը	» » մասն. անձանց

Վերջապես գյուղի էլեքտրիֆիկացիայի շրջանում մեր ձեռք բերած նվաճումները ցույց տվող ավյալները բերենք: 1916 թվին կար ընդամենը 78 գյուղական էլեքտրոկայան՝ 1,352 կիլովատ-ժամ ընդհանուր ուժով, իսկ 1925 թվին հաշվում էր արդեն 446 գյուղական էլեքտրոկայան՝ 7,705 կիլովատ-ժամ ընդհանուր ուժով: Հեղափոխության 9 տարիների ընթացքում միայն՝ մենք ունենք թե՛ էլեքտրոկայանների և թե՛ նրանց հզորության ավելացում համարյա վեց անգամ:

Այդպիսով գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում առաջին քայլերը մենք արել ենք: Թե՛ հետագայում ի՞նչ հաջողու-

թյամբ գյուղին առաջ կշարժվի դեպի սոցիալիզմ, դա ամբողջովին կտրված կլինի մեզնից, մեր համերաշխ ու համառ աշխատանքից :

### ԺՈՂՈՎՐԴԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԼԱՆԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր պետական ամբողջ արդյունաբերությունը կազմված է արեստներից և կոմբինատներից, ու կառավարվում է մի կենտրոնից, վերին հանդիսանում է ՍՍՀՄ Ժողովրդատնտեսության Սորհուրդը: Մեր արդյունաբերության զարգացումը տարերային կերպով տեղի չի ունենում, ինչպես կապիտալիստական յերկրներում, այլ կատարվում է զիտակցարար, տնտեսական մարմինների մշակած պլանով: Արդյունաբերության զարգացման պլանը պետք է համաձայնեցվի Ժողովրդատնտեսության բոլոր այլ ճյուղերի հետ՝ ու ամենից առաջ գյուղատնտեսության զարգացման հետ: Արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը չեն կարող զարգանալ իրարից անջատ, իրարից անկախ: Այս յերկու ճյուղերն իրար հետ սերտ կապված են և նրանց մեջ յեղած կապի խղճը սպառնում է ծանր հետեւանքներով՝ տնտեսական ցնցումների և կրիզիսների ձեով: Այդ պատճառով էլ մենք պետք է վո՛չ միայն պետարդյունաբերությունը, վո՛չ միայն տնտեսության սոցիալիստական մասը կառավարենք, այլ և մենք պետք է ամբողջ Ժողովրդատնտեսությունը կառավարենք և պլանի յերթակներ: Բայց այնպիսի մի հրակայական յերկրի, վորպիսին Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունն է, Ժողովրդատնտեսությունը կառավարելը ծայր աստիճան դժվար և բարդ մի գործ է: Դա բարդանում է նաև այն բանով, վորովհետև մենք պետք է վո՛չ միայն տնտեսական հաշիվ տեսակետով կառավարենք, այլ և մեզ է՛լ ավելի մեծ չափով անհրաժեշտ է, վոր մեր Ժողովրդատնտեսությունը սոցիալիստական ուղղութամբ զարգացնենք: Դա կարելի յե անել միայն կանոնավոր կառուցված տնտեսական այնպիսի պլանի հիման վրա, վորը կարողանար բնդրել յոլոր Ժողովրդատնտեսությունն իր ամբողջութամբ:

Բայց ի՞նչ կերպ մենք կարող ենք կարգավորել մասնավոր արտատեսության զարգացումը:

Պրոլետարական պետության ձեռքերումն են գտնվում իշխող տնտեսական գլխավոր բարձունքները, վորոնց ողնությունը մենք կարող ենք օղղել մասնավոր տնտեսության զարգացման վրա՝ մեզ

ցանկալի ուղղութամբ: Գների քաղաքականությունը, յերկաթուղային տարիֆների քաղաքականությունը, վարկային քաղաքականությունը և, վերջապես, հարկային քաղաքականությունը, — ահա այն տնտեսական յծակները, վորոնք թույլ են տալիս մեզ շուկայի պայմաններում կարգավորել մասնավոր տնտեսությունը: ՍՍՀՄ ամբողջ Ժողովրդատնտեսության համար միասնական արտատեսական պլան կառուցելը միանգամայն հնարավոր է:

Այս տեսակի տնտեսական պլաններ կառուցելու գործին մենք արդեն ձեռնարկել ենք: Նման տնտեսական պլան են հանդիսանում «Ժողովրդատնտեսության կոնտրոլ թվերը», վոր կազմում է Պետական Պլանային Հանձնաժողովը (Պետպլանը) և հաստատում է կառավարությունը: Դրանք կազմվում են մեր նվաճումների մանրագին հաշվառման հիման վրա: Դրանք հանդիսանում են այն փոփոխությունները զիտականորեն նախատեսելու մի փորձ, վոր տեղի կունենա Ժողովրդատնտեսության մեջ՝ նրա հետագա զարգացման գուղընթաց:

«Կոնտրոլ թվերն, ըստ էյություն, մի կողմից պրոգնոզ (նախատեսում), իսկ մյուս կողմից՝ դիրեկտիվ (հրահանգ) են հանդիսանում: Վորքան ճշգրիտ և պրոգնոզը, այնքան պարտադիր է այն, և ընդհակառակը» («Կոնտրոլ թվերը»): Ժողովրդատնտեսության 1926—27 թվի կոնտրոլ թվերի ներածություն մեծ ասված է, վոր մեր տնտեսական քաղաքականությունը բնագավառում հիմնական դիրեկտիվն այն է, վոր «յերկրի արտադրական ուժերն առնել կերպ զարգանան՝ այլ գարգացման ընթացքում սոցիալիզմի դիրքերն ամրապնտելով, ըստ վորում ի նկատի ունենալով, թե սոցիալիզմ չի կարող լինել առանց արտադրական ուժերի զարգացման, բայց վոր Սորհրդային Միության մեջ արտադրական ուժերի ամեն մի զարգացում գրա հետ միասին նաև սոցիալիզմի աճում չի հանդիսանում»:

Մենք սոցիալիզմ ենք կառուցում բնական անհուն հարստություններ ունեցող մի յերկրում, միևնույն ժամանակ տեխնիկապես ու տնտեսապես հետամնաց մի յերկրում: Մենք պետք է ի նկատի ունենանք, վոր նախապատերազմայն այն մակարդակը, վորին մենք հասել ենք, ինքն ըստինքյան շատ ցածր մի մակարդակ է հանդիսանում յեվրոպական կապիտալիստական յերկրների մակարդակի հետ համեմատած: Մենք վո՛չ մի դեպքում չենք կարող բավարարվել ձեռք բերված հաջողություններով և պետք է է՛լ ավելի մեծ յեռանդով զարգացնենք յերկրի արտա-

զբաղան ուժերը: Մեր ժողովրդատնտեսութեան կառուցման պլանայութեան շնորհիվ մենք անհամեմատ ավելի արագ ստալ կշարժվենք կապիտալիստական յերկրներէրց, վորոնց արտադրութեան անարխիան տանում է նրանց զեպի հսկայական միջոցներէ ու ուժերի աննպատակ վատնում: Ժողովրդատնտեսութեան կառուցման պլանայութեանը մեզ հսկայական աւազելութեանը կընձեռի, վորոնց մենք կողտագործենք, վոր յերկրի արտադրական ուժերի զարգացմամբ մենք հասնենք կապիտալիստական յերկրներին ու ավելի ստալ անցնենք նրանցից:

### 3. ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՐՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑԻԱՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԸ ԶԵՎ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերը մենք խոսեցինք այն մասին, թե սոցիալիզմի կառուցման հիմնական ուղին յերկրի ինդուստրիալիզացիան է: Բայց մեր յերկիրն ինդուստրիալիզացնելու համար հսկայական միջոցներ են հարկաւոր: Մինչդեռ մեզնում յեղած ալ միջոցները անբավարար են, մեր պաշարները զեռ շատ աղքատիկ են, մեզնում քիչ կապիտալ կա: Ապա վորոնցից կարող ենք մենք ստանալ յերկիրն ինդուստրիալիզացիայի յենթակելու համար անհրաժեշտ միջոցները:

Մենք չենք կարող հույս դնել ոտար յերկրյա փոխտնտեսութեաններէ վրա: Արտասահմանյան բուրժուազիան մեզ պետք յեղած կապիտալները չի տալիս մեր կողմից ընդունելի պայմաններով: Մենք Հոկտեմբերյան Հեղափոխութեանը չկատարեցինք, վոր ոտար յերկրյա կապիտալին ճորտ դառնանք, ալ կատարեցինք, վոր մեր յերկիրն ինքնուրույն, անտեսական ու քաղաքական տեսակետով կապիտալիզմից միանգամայն անկախ դարձնենք, վոր մեր յերկրում սոցիալիզմ կառուցենք: Բուրժուական յերկիրներն ինդուստրիալացել են ի հաշիվ բանութեաններէ և պատերազմական կողոպուտներէ, ի հաշիվ զաղութների շահագործման և թույլ ժողովուրդների ճնշման: Պրոլետարական պետութեանը բոլոր ճնշված ժողովուրդների բարեկամն է հանդիսանում, նա պայքարում է իմպերիալիզմի դեմ, վոր զաղութները միանգամայն ազատվեն ոտար բանութեանից, վոր բոլոր յերկիրներն ազատ զարգանան: Պարզ է, վոր կողտ-

պուսներէ ու բանութեանների ուղին մեր ուղին չէ, պարզ է, վոր ալյգպիսի ճանապարհով մենք չենք կարող ինդուստրիալացվել: Մեզ համար միակ հնարավոր ուղին, վոր մենք բռնել ենք արդեն—զաինդուստրիալիզացիան է ի հաշիվ յերկրի ներսում կատարված սոցիալիստական կուտակման կատարելն է: Մենք ներքին կուտակում մի չարք աղբյուրներ ունենք:

«Վոչ—արտադրական դասակարգերի (բուրժուազիայի և աղնրվականութեան) և քաղաքացիական<sup>\*</sup>), պարտքերի աննուշացիան<sup>\*\*</sup>), արդյունարբութեան, պետաուտրի (ներքին և արտաքին) և վարկային սմբողջ սիտեմի յեկամուտները պետութեան ձեռքում կենտրոնացնելը և ալն, ալ բոլորն ըստինքյան յերկրի ներսում այնպիսի կուտակման հնարավորութեան են ընձեռում, վորն ապահովում է ինդուստրիալիզացիայի այն անհրաժեշտ տեմպը, վոր պետք է սոցիալիստական յինարարութեան համար»: (Համկոմկուսի (բ) կենտկոմի 1926 թ. ապրիլյան պլենումի բանաձեւից): Մենք պետք է նկատի ունենանք, վոր ինդուստրիալիզացիա կատարելու միջոցների ալ աղբյուրներ չունենք, և դրա համար ել պետք է խնայողաբար վերաբերվենք կուտակված յուրաքանչյուր կուպեկին: Մենք պետք է մեր միջոցները կանոնավոր ու խնայողաբար ծախսել սովորենք, այնպես ծախսենք, վոր կուտակման ըստ կարելույն մեծ մասը հիմնական յինարարութեանը հատկացնենք:

«Յեթե մենք այնպես անենք, վոր բանվոր դասակարգի յեկամարութեանը գյուղացիութեան վերաբերմամբ պահպանվի, ալ զեպընում մենք հնարավորութեան կատանանք մեր պետութեան մեջ անտեսութեան մեծագույն ու գերագույն խնայողութեան գնով հասնել այն բանին, վոր ամեն մի փոքր խնայողութեան պահենք մեր խոչոր մեքենայական ինդուստրիայի զարգացման, էլեքտրիֆիկացիայի, հիդրոտորֆի զարգացման, Վոլխովստրոյի կառուցումն սվարտելու և այլն համար: Դրա, միայն գրա վրա պիտի գրվի մեր հույսը» (Լենին):

<sup>\*</sup>) Այսինքն նրանց ձեռքից հողն ու արտադրութեան միջոցները խլելու և վերջիններից պրոլետարական պետութեան սեփականութեան դարձնելը:

<sup>\*\*</sup>) Այսինքն ցարական կառավարութեան և Գերենսկու կառավարութեան արած պարտքերի չձանաչելը, վոչնչացնելը:

Անհրաժեշտ խոսել և այն մասին, թե խորհրդային ամեն մի կուսակ մենք պետք է խնայենք՝ մեր խոշոր արդյունաբերությունը դարդացնելու համար: Վոչ-արտադրական ծախքերի դեմ պայքարելը, շոտյության և ավելորդության դեմ պայքարելն այժմ, յերբ մենք ձեռնարկել ենք ինդուստրիալիզացիայի իրականացման գործին, իսկապես հակայական նշանակություն ունի: Մեր անտեսավարժան և կառավարման բոլոր բնագավառներում խնայողության խիստ ուժեղ կիրառելն անհրաժեշտ պայման է հանդիսանում՝ յերկրի ինդուստրիալիզացիան հաջող կերպով կատարելու համար: Ահա՛ թե ինչու կուսակցության և կառավարության ուշադրությունը ներկայումս ամբողջովին դարձված է այս հարցի վրա:

XV կուսկոնֆերանսի բանաձևի մեջ ասված է. —

«Անհրաժեշտ է յերկրի ինդուստրիալիզացիան իրականացնելու ատանց խնայողության ուժեղ կիրառելու: Ամբողջ կուսակցության և խորհրդային բոլոր մարմինների ուշադրությունը պետք է ուղղվի այն հանդամանքի վրա, վոր վերջ արվի ամեն տեսակ ավելորդություններին և վոր արտադրական ծախսերին:

Խնայողության ուժեղ ու կանոնավոր կիրառելու անհրաժեշտ պայմանը հանդիսանում է այս գործի մեր բանվորական լայն մասսաների մասնակցությունը: Խնայողության ուժեղ հաստատուն իրականացումը կարող է և պետք է զգալի միջոցներ ավելացնել՝ յերկրի ինդուստրիալիզացիայի հիման վրա անտեսության գարդացումն առաջ տանելու համար: Կոնֆերանսը նշում է, թե խնայողության ուժեղ կիրառելու ընթացքում կուսակցության գիրեկախների խեղաթյուրումներ են տեղի ունեցել, վորոնք խնայողությունն է հաշիվ բանվոր դասակարգի կենսական կարիքների իրագործելու փորձերով են արգահայտվում: Խնայողության ուժեղ այդորինակ ալյանդակման դեմ անհրաժեշտ է միջոցառում պայքար մղել այս ուղղությամբ կատարվող ամենատեսակ փորձեր արմատախիլ անել»:

Մենք խնայողության ուժեղ կիրառենք վերագրելու ծախսերը, մեր անտեսական ու խորհրդային հիմնարկությունների չափազանց ուռցրած շտապների պահպանման ծախսերը խիստ կրճատելու, այդ հիմնարկությունների մեջ ամենատեսակ վոչ-արտադրական ծախսերը վերացնելու ճանապարհով, մեր ձեռնարկությունների մեջ արտադրություն ավելի կանոնավոր կազմակերպելու ճանապարհով, կամայական բացակայությունների և գործի

ժամանակ պարսպ մնալու դեմ պայքարելու և աշխատանքային դիսցիպլինան ամրապնդելու ճանապարհով: Չկա վրո՛չ մի խորհրդային ու անտեսական հիմնարկություն, չկա վրո՛չ մի ձեռնարկություն, վորտեղ՝ գործին ուշադիր ու բանական վերաբերմունք ցույց տալու դեպքում՝ մենք չկարողանայինք մեծ գումարներ անտեսել, վորոնք այժմ դեռ մեր անփութության և անկուրտութեան արդյունքն են: Մեր անտեսավարժան և կառավարման բոլոր բնագավառներում խնայողության ուժեղ կիրառելն անհրաժեշտ պայման է հանդիսանում՝ յերկրի ինդուստրիալիզացիան հաջող կերպով կատարելու համար: Ահա՛ թե ինչու կուսակցության և կառավարության ուշադրությունը ներկայումս ամբողջովին դարձված է այս հարցի վրա:

Խնայողության ուժեղ ու կանոնավոր կիրառելու անհրաժեշտ պայմանը հանդիսանում է այս գործի մեր բանվորական լայն մասսաների մասնակցությունը: Խնայողության ուժեղ հաստատուն իրականացումը կարող է և պետք է զգալի միջոցներ ավելացնել՝ յերկրի ինդուստրիալիզացիայի հիման վրա անտեսության գարդացումն առաջ տանելու համար: Կոնֆերանսը նշում է, թե խնայողության ուժեղ կիրառելու ընթացքում կուսակցության գիրեկախների խեղաթյուրումներ են տեղի ունեցել, վորոնք խնայողությունն է հաշիվ բանվոր դասակարգի կենսական կարիքների իրագործելու փորձերով են արգահայտվում: Խնայողության ուժեղ այդորինակ ալյանդակման դեմ անհրաժեշտ է միջոցառում պայքար մղել այս ուղղությամբ կատարվող ամենատեսակ փորձեր արմատախիլ անել»:

Միայն կլինի կարծել, թե խնայողության ուժեղ հերթական «հարվածային» մի կամպանիա չէ, վոր կարելի չէ կատարել կարճ ժամանակամիջոցում: Վրո՛չ, խնայողության ուժեղ—գա խորհրդային պետություն այն քաղաքականությունն է, վորն ավելի յերկար ժամանակ է տևելու և կիրառվելու չէ համառ ու հատուտ մի ամբողջ շարք տարիների ընթացքում: Ահա՛ ինչու Արհմիությունների VIII համագումարը խնայողության ուժեղ մասին ընդունած իր բանաձևի մեջ մատնանշում է. —

«Խնայողության ուժեղ իրագործման այս յերկարատև, ուշադրություն ու հաստատականություն պահանջող աշխատանքի ընթացքում՝ արհմիությունները չպիտի բավականանան միայն ձևակերպով, այլ և արտադրության բարելավման, անտեսական ու պետական ապարատի պարզացման, բարելավման և եժանցման ուղղությամբ ձեռք առնված միջոցների անմիջական նախաձեռնողների պիտի հանդիսանան: Նրանք պետք է մանրազնին ստուգեն, թե ինչ իրական արդյունքներ են ձեռք բերված այս ուղղությամբ՝ այդ

նպատակով անտեսական մարմինների գեկալարների հաշվետվութ-  
յունները լսելով» :

Արհմիությունները հակառակն զեր ունեն խնայողության ու-  
ժիւր կիրառելու գործում : Արհեստակցական միություններն ի-  
րենց գրությամբ շատ մոտիկ են կանգնած մեր անտեսական սպա-  
րառներին , ամբողջ արտադրությանը և պետական տնտեսությանը :  
Այդ պատճառով ել նրանք ավելի , քան վորեւ ալ կազմակերպու-  
թյուն , կարող են և պետք է զրդիչ հանդիսանան անտեսական մար-  
մինների վերաբերմամբ՝ խնայողության ուժիւր կիրառելու գոր-  
ծում :

### ԱՐՏԱԴՐՈՒՅՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԻՉԱՑԻԱՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

Սոցիալիստական կուտակման գլխավոր ազդեցություններից մեկը  
հանդիսանում է այն շահույթը , վոր ստանում է պրոլետարական  
պետութիւնը պետական արդյունաբերութիւնից : Յերկրի ինդուս-  
տրիալիզացիան հաջող ի կատար ածելու համար անհրաժեշտ է  
պետական արդյունաբերության ներսում միջոցները անտեսումն  
ավելացնել : Բայց ներարդյունաբերական կուտակումն ավելացնելու  
համար անհրաժեշտ է պետական ձեռնարկութիւնների յեկամա-  
բերութիւնն ավելացնել : Իսկ դա հնարավոր է յերկու ճանապարհ-  
ով :—Պետական ձեռնարկութիւնների շահույթը կարող է աճել  
կամ ազրանքների գործարանային գների բարձրացման հաշիւն ,  
կամ ել արդյունաբերական ազրանքների ինքնարժեքի իջեցմամբ ,  
բայ վորում զրանց գինը կարող է մնալ նույնը , կամ նույնիսկ կա-  
րող է իջնել : Բանվոր դատակարարի , գյուղական շքավորությանը  
և միջակին ցածր գներն են ձեռնու , իսկ բարձր գները ոգտավետ  
են կուլակի և նեպոմանի համար : Արդյունաբերական ազրանքների  
գները բարձրացնելու ճանապարհը մենք չենք կարող բռնել : Բան-  
վոր դատակարարի և գյուղացիութիւնի հիմնական ժասսայի շահերն  
ի նկատի ունենալով մեր կուտակցութիւնը զների ավելի ու ավելի  
իջեցման կուրսն է բռնել : Այդ պատճառով ներարդյունաբերական  
կուտակման ավելացումն հնարավոր է միայն պետական արդյու-  
նաբերութիւն արտադրանքի ինքնարժեքն իջեցնելու հաշիւն : Իսկ  
ինքնարժեքի իջեցման մենք կարող ենք հասնել միայն պետական

ձեռնարկութիւնների մեջ աշխատանքի արտադրողականութիւնը  
բարձրացնելու հիմունքով : Իր հերթին , պետական ձեռնարկու-  
թիւնների մեջ աշխատանքի արտադրողականութիւնն ել ավելի  
բարձրացումը ամբողջովին կախված է աշխատանքի ռացիոնալի-  
զացիայից , արտադրութիւնն ու կառավարման ռացիոնալիզացիա-  
յից : Աշխատանքի արտադրողականութիւնն աճումը կախված է վոր  
այնքան բանվորի վարժվածութիւնն ու նրա աշխատանքի լարվա-  
ծութիւնն աստիճանից , վորքան ձեռնարկութիւնների մեջ աշխա-  
տանքի կանոնավոր կազմակերպումից և արտադրութիւնն տեխնի-  
կայի բարելավումից : Այս կերպ , պետական արդյունաբերութիւնն  
ներսում միջոցների կուտակման հարցն այժմ վերջին հաշիւով դեմ  
է անում արտադրութիւնն ռացիոնալիզացիայի հարցերին :

Ի՞նչ է ապա արտադրութիւնն ռացիոնալիզացիան :

Արտադրութիւնն ռացիոնալիզացիա նշանակում է արտադրու-  
թիւնն տեխնիկայի բարելավում , մեքենաների լավագույն ոգտա-  
գործում և նրանց նպատակահարմար բեռնավորում (загрузка ,)  
հումքի և զանազան նյութերի կանոնավոր ոգտագործում , վտու-  
լիքի խնայողական ոգտագործում՝ նորագույն ձեւերով : Արտադր-  
ութիւնն ռացիոնալիզացիա նշանակում է ձեռնարկութիւնների մեջ  
ամենատեսակ կազմակերպչական բարելավումներ . և տեխնիկա-  
կան կատարելագործումներ մտցնել (լենտային սխեմա , ստան-  
դարտը , վորոնք հեշտացնում են աշխատանքը , պարզացնում և ա-  
վելի արտադրողական են դարձնում այն :

Աշխատանքի ռացիոնալիզացիա նշանակում է բանվորական ու-  
ժի ավելի կանոնավոր ոգտագործում , ձեռնարկութիւնն մեջ բան-  
վորների միջև աշխատանքի ավելի խորը բաժանում , աշխատան-  
քային դիսցիպլինայի բարձրացում , բանվորական որվա խա-  
ցում , նոր , ավելի ձեռնու միջոցների ու աշխատանքի այնպիսի  
ձեւերի գործադրում՝ աշխատանքի դիտական կազմակերպման հի-  
մունքով (Աշ . Գ . Կ .) , վորոնք բարձրացնում են նրա արտադրողա-  
կանութիւնը :

Կառավարման ռացիոնալիզացիա նշանակում է մեր հիմնար-  
կութիւնների և մարմինների վերակազմում՝ վորպեսզի նրանք  
հարմարվեն վերակառուցման շրջանի նոր պահանջներին , նրանց  
ամենատեսակ հաշիւագահութիւնն պարզացում , վերահսկողութիւնն

կարգավորում, աշխատավորների վորակի բարձրացում՝ ի հաշիվ նրանց քանակի կրճատման և այլն:

Ի հարկե, չի կարելի պատկերացնել, թե ոսպիոնալիզացիային վերաբերող այս բոլոր խնդիրները կարող են անհապաղ վճուվել վերելից տրված հրամանով: Ռացիոնալիզացիայի իրականացումը մեծ գաղափարներ են, ուղղորդված են և բազմակողմանի ուսումնասիրություն և պահանջում: Արտադրությունն ուսպիոնալիզացիան պետք է կատարվի արհեստակցական միությունների և ամբողջ բանվորություն անմիջական մասնակցությամբ միայն: Միայն այս դեպքում մենք կկարողանանք հասնել յուրջ հաջողությունների՝ ոսպիոնալիզացիայի գործում: Արտադրության ոսպիոնալիզացիան յերկար ու գծավարին մի ճանապարհ է: Բայց և այնպես մենք այդ ճանապարհի վրա կանգնել ենք ու գնում ենք այդ ճանապարհով, համոզված լինելով, թե դա մեր անտեսական նվաճումների ամենաճիշտ ճանապարհն է:

«Ձեռնարկության ներսում աշխատանքի կազմակերպումն հենց նոր սկզբունքներով, գիտություններով ու պրակտիկայով ստուգված հիմունքներով՝ հանդիսանում և այն կարևորագույն ուղին, վորի ողնությունները մենք կարող ենք ավելացնել ձեռնարկությունների արդյունավետությունը: Ձեռնարկությունների ոսպիոնալիզացիան, յեղած սարքավորման յայտագույն սպասարժումը, արտադրության ներսում աշխատանքի պրոցեսի յավազույն կազմակերպումը, —այդ բոլորը մեր անտեսությունը զարգացման այժմյան փուլի մեջ հատկապես կարևոր նշանակություն են ստանում: Իսկ պետական սպարատի էֆանությունը, արդյունաբերության արտադրանքի էֆանությունը, —այդ բոլորն հանդիսանում են անտեսման արևայտություն յավազույն միջոցը՝ կուտակումն ավելանալու նպատակով» (Կուլբիչև):

Արտադրության ոսպիոնալիզացիան նվազեցնում է սպարանքի միավորի մշակման վրա ծախսված աշխատանքի քանակը: Դա յի հենց արտադրության ոսպիոնալիզացիայի էյությունը: Իսկ դա նշանակում է, վոր ոսպիոնալիզացիա կատարելիս առանձին ձեռնարկությունների մեջ գրազված բանվորների թիվը կարող է կրճատվել: Սակայն պետական արդյունաբերության զարգացման պրայնը գրազված բանվորների ընդհանուր թվի հավելում է նախատեսում: Արտադրության ոսպիոնալիզացիան մեզնում կկատարվի արդյունաբերական պրոլետարիատի թվի ուղիղ աճման պայմաններում: Առանձին դեպքերում կարող է, ի հարկե, այս կամ այն

ձեռնարկության բանվորների թիվը կրճատվել: Այդ պատճառով բանվորների առանձին խմբերը կարող են ժամանակավորապես տուժել ոսպիոնալիզացիայից: Կուտակյությունն ու կատարվածությունը նման դեպքերի հնարավորությունը հաշվի յեն առնում և արդեն յսկ այժմ միջոցներ են ձեռք առնվում, վորպեսզի ապահովվեն բանվորների այն խմբերը, վորոնք ոսպիոնալիզացիայի շնորհիվ կազատվեն ձեռնարկությունների մեջ աշխատելուց: Այդպիսի բանվորներին ծրագրվում է արձակման նպատակով տալ՝ մեկ և կես ամսից մինչև յերեք ամիս՝ նայած շրջանների, վորպեսզի նրանք կարողանան գործ գտնել այն շրջաններում, ուր բանվորական ուժի պահանջ կա: Բացի այդ, գործի մտնելիս այդպիսի բանվորներին նախապատվություն կտրվի այլ խմբերի վերաբերմամբ:

Կրկնում ենք մեր ոսպիոնալիզացիան, ի տարբերություն կատարելիստական ոսպիոնալիզացիայից, կատարվում է և այսուհետև և կկատարվի գրազված բանվորների ընդհանուր թվի անընդհատ աճման պայմաններում, բանվոր դասակարգի նյութական դրությունն անչեղ բարելավման պայմաններում:

Այդպես, միայն 1925-26, անտեսական տարում յոտչոր արդյունաբերության բանվորների թիվը մեղանում աճել է 439 հազարով: Ամբողջ արդյունաբերության մեջ որակյան միջին աշխատավարձը 1925 թվի հոկտեմբերին 2.1 չերվ. ուրլի եր, յսկ 1927 թ. մարտին դա բարձրացավ մինչև 2.25 չերվ. ուրլի, այսինքն ավելացավ 21,3% -ով. ուսայ աշխատավարձը նույն ժամանակամիջոցում ավելացավ 12,1% -ով: Վարձու աշխատանքով գրազվող անձանց ունեցած յեկամուտների տեսակարար կշիռը տարեց տարի աճում է: —1923 թվին վարձու աշխատանքով գրազված անձանց յեկամուտը ազգային ընդհանուր յեկամուտի 22% էր կազմում, 1923-24 թվին՝ 23,2%, յսկ 1925-26 թվին՝ արդեն 29,2%:

Բոլորովին այլ բնույթ ունի կապիտալիստական ոսպիոնալիզացիան: Գերմանական քարածխային արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը մի բանվորին աճել է 1913 թվից 17% -ով, յսկ ուսայ աշխատավարձը նույն ժամանակում ընկել է վորչ պակաս, քան 10%: Միայն 1926 թվին Գերմանիայում ոսպիոնալիզացիան ազգային յեկամուտից բանվոր դասակարգի ըստացած բաժինը պակասացրեց 4 միլիարդ մարկով: Նույնն է նրկատվում նաև մյուս կապիտալիստական յերկրներում: Կապիտա-

լիստական օացիոնալիզացիան արտահայտվում է բանվոր դասակարգի վրա անմիջական ճնշում գործադրելով, ու կատարվում է ի հաշիվ բանվորական ուր յերկարացնելու, աշխատավարձը նվազեցնելու, արտադրութայն մեջ զրադված բանվորների թիվը կըրծատելու: Մի խոսքով, կապիտալիստական օացիոնալիզացիան ամենուրեք կատարվում է հոգուտ բուրժուազիայի և ի հաշիվ բանվորութայն աղքատացման:

### ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՐԸ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՄ

ԽՍՀՄ կատարված արտադրութայն օացիոնալիզացիային ուղեկցում է բանվոր դասակարգի աշխատանքի պայմանների բարելավումը և նրա բարեկեցութայն մակարդակի բարձրացումը: ԽՍՀՄ արտադրութայն օացիոնալիզացիան ավելացնում է արտադրանքի քանակը և բարելավում է նրա վորակը, իջեցնում է արդյունաբերական ապրանքների խնդարժեքը և նրանց գործարանային գները: Արտադրութայն օացիոնալիզացիան հանդիսանում է սոցիալիստական արդյունաբերութայն զարգացման միջոցների լրացուցիչ աղբյուրը:

Մեր խորհրդային օացիոնալիզացիան կատարվում է հոգուտ ամբողջ բանվոր դասակարգի ընդհանրապես: Ահա՛ ինչու մեր պայմաններում արտադրութայն օացիոնալիզացիայի գործը բանվոր դասակարգի և նրա բոլոր կազմակերպութայնների գործն է: Յեթե կապիտալիստական յերկրներում բանվոր դասակարգի է նրա արհեստակցական միութայնների անմիջական խնդիրը իրենց նյութական դրութայնը բարելավելու համար մղված պայքարն է, կապիտալի հարձակման դեմ մղված պայքարն է, — ախրինչ ԽՍՀՄ բանվոր դասակարգի և արհմիութայնների մերձավոր խնդիրն է օացիոնալիզացիայի կատարման համար մղված պայքարը, խնայողութայն օեթիմի և արտադրութայն օացիոնալիզացիայի կիրառման գործի մեջ անմիջական ու ակտիվ մասնակցութայնը:

Իր անշառների արտադրական հարուստ փորձն ուղտագործելով՝ արհեստակցական միութայնները պարտավոր են ոգնել մեր տընտեսական մարմիններին՝ արտադրութայն օացիոնալիզացիային վերաբերող միջոցները նշելու և իրագործելու խնդրում: Դրա հետ

միասին արհեստակցական միութայնները պետք է հետեեն, վոր այս միջոցները ճնշեն բանվորների անհատական արտադրողականութայնը, այլ վոր դրանք կատարելագործեն արտադրութայն տեխնիկան, բարելավեն աշխատանքի պայմանները և կանոնավոր կազմակերպեն այն:

Արտադրութայն օացիոնալիզացիայի գործում հատկապես կարևոր դեր պետք է խաղան ձեռնարկութայնների Փաբգործարկո՞ւները, արտադրական հանձնաժողովները և արտադրական խորհրդակցութայնները: Արտադրական խորհրդակցութայնների մեջ մասնակցում են արտադրական մեծ փորձ ունեցող բանվորները, վորոնք լավ ծանոթ են իրենց ձեռնարկութայն գործերին և ուրիշներից ավելի լավ են տեսնում արտադրութայն թերութայններն ու աննորմալութայնները: Արտադրական խորհրդակցութայնների ժամանակ ձեռնարկութայն աշխատանքի բացատրական և դրական կողմերի զննարկութայնը, զանազան տեսակի թերութայնները վերացնելու ձևերի մասին բանվորների աբած առաջարկները՝ կարող են մեր տնտեսավարների համար վորպես գնահատելի ցուցմունքներ ծառայել՝ արտադրութայն օացիոնալիզացիայի միջոցների վերաբերմամբ:

«Տնտեսական, արհեստակցական և կուսակցական կազմակերպութայնները պետք է բոլոր միջոցներով նպաստեն արտադրական խորհրդակցութայնների աշխատանքի բարելավմանը և պետք է հետեեն, վոր արտադրութայն օացիոնալիզացիայի և բարելավման ուղղութայնմբ արտադրական խորհրդակցութայնների արած ցուցումները և կայացրած վորոշումները արագ կիրպով իրագործվեն»: — Դա յի Համամիութենական XV կուսկանՖերանսի գիրկատիվը:

Արտադրութայն օացիոնալիզացիան և խնայողութայն օեթիմը հանդիսանում են վորպես յրացուցիչ միջոցների աղբյուր, վորոնք կըրծադրվեն Փարրիկ-գործարանային նոր շինարարութայն վրայերկրի ինդուստրիալիզացիայի տեժպն արագացնելու գործի վրա:

### ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԳՆ ԵՐԻԻՉԵՑՈՒՄԸ

Ոպոպիցիան միանդամայն սխալ կերպով յերկրի ինդուստրիալիզացիայի ընթացքն արագացնելու լրացուցիչ միջոցների աղբյուրը արդյունաբերական ապրանքների գործարանային գների բարձ-

բացումն և համարում : Ուղղիցիայի այս գիծը սխալ և , վորովհետև գործարանային գների բարձրացումն անխուսափելիորեն առաջ կբերի նաև մանրածախ գների բարձրացում : Մանրածախ գների բարձրացումը կտանի դեպի բանվորների ունալ աշխատավարձի անկում : Գյուղացիութան չքավոր ու միջակ լայն խավերը չեն կարող բարձր գներով արդյունաբերական ապրանքներ գնել : Բարձր գներով ապրանք կարող է գնել միայն կուլակը : Դա անխուսափելիորեն պրոլետարիատի և դյուղացիութան հիմնական մասնայի միջև յեղած սերտ կապի խզում առաջ կբերի , դյուղի կողմից արդյունաբերական ապրանքների պահանջը կկրճատվի և շուկան կնեղանա : Իսկ շուկայի նեղացումն , իր հերթին , ծանր կանդաղառնա արդյունաբերութան զարգացման վրա ու կզնի նրան կրիզիսի ապստանալիքի առջև :

Ահա ինչու XV կուսկոնֆերանսի բանաձևը , վոր ժխտում է գործարանային գների բարձրացման մասին ուղղիցիայի արած առաջարկները , առում է հետևյալը :—«Գործարանային գրների բարձրացման ձեվերով փորձել ինդուստրիայի զարգացումը և մեր արդյունաբերութունը մեկուսացված , ժողովրդասնահատութան բոլոր մյուս ճյուղերից կտրված ծավալել , նրա արտադրանքի վաճառքի շուկայի ընդլայնումը սահմանափակել : Դա նշանակում է գրգել , վոր մանրածախ գներն ավելի բարձրանան ու գրանով հենց աշխատավարձի ունալ մակարդակն իջեցնել , դյուղը քաղաքի դեմ կանգնեցնել , դյուղի շերտավորումն ու ժեղացնել՝ արդյունաբերական ապրանքները դյուղի ավելի միջոցավոր խավերին միայն մատչելի դարձնել : Դա նշանակում է Կոնֆուսիոսի\* համար նախադրյալներ ստեղծել և , վերջին հաշվով , ինդուստրիայի զարգացումն իրականացումն հենց անհավոյութան մատենել» :

Գործարանային գների իջեցումը բոլորովին հակառակ հետևանքներ է ունենում : Կուսակցութունն ամուր ու հաստատ կերպով վարում է գործարանային ու մանրածախ գների իջեցման քաղաքականութունը : Այս տարի արդյունաբերութան մեջ արտադրութան ինքնալիցիտ 26 տոկոսով և մանրածախ գները 10 տոկոսով մենք իջեցրինք : Ի հարկե գների իջեցման բնագավառում մեր այս նվաճումները գեո անբավարար են , ձեռք բերված արդյունքների վրա կանգ առնել մենք չենք կարող : Մեք պետք է այսուհետև ելլ ավելի համառությամբ ու հաստատակամությամբ ավելի իջեցնենք մեծածախ ու մանրածախ գները : Առանձին հաստատակամությամբ և յե-

ռանգով մենք պետք է իջեցնենք արտադրութան ինքնալիցիտ , վորովհետև այս ուղղությամբ կուսակցութան տված դիրեկտիվներն առաջմա ի կատար են ածված կեսից ել պակաս չափով (այս տարի ծրագրված էր իջեցնել 5 %-ով , իսկ մենք իջեցրել ենք միայն 2 %-ով) :

Արդյունաբերական ապրանքների գների իջեցումը բանվորների ունալ աշխատավարձի բարձրացման միջոց , բանվորութան ու դյուղացիութան զողումն ամբացնելու միջոց է հանդիսանում : Գների իջեցումը լավագույն ազդեցության է հանդիսանում բանվորներին և դյուղացիական մասսաներին սոցիալիստական շինարարութան գործի մեջ քաշելու համար :

Ահա՛ ինչու արհեստակցական միությունները պետք է անխոնջ պայքար մղեն գներն իջեցնելու , վերադիր ծախսերն իջեցնելու , մեր սուստրական ապարատներն կանոնավոր ու կծան կազմակերպելու համար : Արհմիությունները պետք է պայքարեն , վոր մեր սուստրական կազմակերպությունների մեջ արդյունաբերական ապրանքների վրա բարձր վերադիրներ չդրվեն , պետք է հետևեն , վոր այդ կազմակերպությունները կուսակցութան տված դիրեկտիվները՝ գներն իջեցնելու մասին , կանոնավոր ու անչեղ կատարեն :

## ՊԱՅԲԱՐ ԲՅՈՒՐՈՒԿՐԱՏԻՉՍԻ ԴԵՍ

Սոցիալիստական շինարարութան ասպարիզում մեզ առաջադրվող խոշոր կարևորություն ունեցող բոլոր խնդիրները մենք չենք կարող իրադրծել , յեթե վճռական ու անողոր պայքար չմղենք մեր պետական և անսուսական հիմնարկությունների մեջ յեղած բյուրոկրատիզմի դեմ :

«Սորհրդային իշխանութան դոյութան ամբողջ ժամանակաշրջանում բյուրոկրատիզմը խոշոր չարիք է հանդիսացել : Այդ չարիքն էլ ավելի վտանգավոր է դառնում ներկայումս , յերբ յերկիրը ձեռնարկում է իր անսուսական ամբողջ կյանքի վերակառուցման գործին : Բյուրոկրատական ապարատի հրահայական արժեքը , շինարարութան անհետաձգելի հարցերի լուծման չափազանց քաշքուշիկը , կուսակցութան և պետական իշխանութան դիրեկտիվների հաճախակի խեղաթյուրումը , այդ բոլորն ամենալուրջ արգելքներ են հանդիսանում շինարարութան հետագա ճանապարհի վրա : (XV կուսկոնֆերանսի բանաձեվից) :

\* ) Թղթադրամների արժեքի անկում :

Ահա՛ ինչու պետական և տնտեսական ապարատի մեջ բյուրոկրատիզմի դեմ պայքար մղելն այժմ առանձնապես կարևոր նշանակություն է ստանում: Արհեստակցական միություններն իրենց ստորին ըջիջներն՝ ֆարգործարկումների, տեղիումների, միջոցով շատ բան կարող են անել մեր պետական և տնտեսական մարմինների մեջ բյուրոկրատական սնանոցը յերևույթներն արմատախիլ անելու ուղղութեամբ:

Մեր հիմնարկությունների աշխատանքի ամենատեսակ մանր թերություններն ու ալյանդակություններն ուղղելուն զուգընթաց՝ կուսակցութեանը դրել է այն հարցը, Վոր «տնտեսութան կառավարման ապարատի կառուցման ամբողջ սխտեմը վերանայվի»՝ «այդ սխտեմը բարելավելու, առավելագույն չափով այն պարզացնելու ու ետանադնելու նպատակով»:

Ավելորդ է խոսել այն մասին, Վոր մեր պետական և տնտեսական հիմնարկությունների մեջ իշխող բյուրոկրատիզմից և քաշքըչուկից հաճախ տուժում են բանվորները և գյուղացիների ամենակենսական, ամենամիջական շահերը:

Խորհրդային հիմնարկությունների մեջ բյուրոկրատիզմ առաջ բերող հիմնական պատճառներից մեկը հանդիսանում է մեր ընդհանուր կուլտուրական հետամուտությունը, բանվոր դատակարգի մեջ լավ պատրաստություն ունեցող կուլտուրական ուժերի պակասը: Բանվորական բոլոր կողմակերպությունների և հատկապես արհեստակցական միությունների խնդիրը՝ բանվորութան միջկց աշխատավորների անհրաժեշտ կողքեր պատրաստելն է, նրանց սովորեցնելն է, մեր տնտեսավորութան ու կառավարման բոլոր ասպարեզների ղեկավար դիրքերի համար նրանց առաջ քաշելն է: Մեր պետական և տնտեսական հիմնարկությունների ծառայողների և աշխատակիցների մեծ մասը կազմված է այն աշխատավորներից, Վորնք հին ուժի մի ապարատների մեջ են աշխատանքի սովորել և Վորնք իրենց այդ սովորույթները տեղափոխել են մեր հիմնարկությունները: Այդ պատճառով էլ զարմանալի չէ, Վոր յերբեմն մեր հսկայական բյուրոկրատական մեքենան զնուժ է Վոչ այն կողմը, դեպի ուր նրան սղղում ենք մենք: Մենք պետք է հին աշխատավորներին փոխարինողներ պատրաստենք: Այս խնդիրն իր ամբողջ հասակով կանգնած է արհեստակցական միությունների

առաջ, Վորնք բանվորական լայն մասսաների համար տնտեսավարման ու կառավարման իսկական դպրոց են հանդիսանում:

## «ՄԱՍՍԱՆԵՐԻՆ ԱՎԵԼԻ ՄՈՏԻԿ» ԼՈԶՈՒՆԳԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«ԽՍՀՄ» ամբողջ տնտեսութեանը վերականգնման պրոցեսից վերահսկողացմանն անցնելու դժվարութեանները արհամիություններից առանձնապես լարված աշխատանք են պահանջում՝ բանվորական մասսաներին լայն չափերով դաստիարակելու և լուսավորելու, այդ մասսաների հետաքրքրութեանը բանվոր դասակարգի ընդհանուր խնդիրների վերաբերմամբ ավելի բարձրացնելու, սոցալիստական շինարարութեան ամբողջ դործի մեջ (խորհուրդներ, տնտեսական մարմիններ, կոոպերացիա և այլն) բանվորական մասսաներին ավելի լայն չափերով մասնակից դարձնելու ուղղութեամբ»:— Ահա՛ դա յի այն հիմնական պիտք, Վոր ընդունել է Արհամիությունները V Վ համագումարը, մի գիծ, Վորով պետք է ղեկավարվեն արհեստակցական միություններն իրենց գործնական աշխատանքի ընթացքում:

Մեր յերկրում սոցիալիզմի կառուցման հսկայական աշխատանքը պահանջում է, Վոր միլիոնավոր աշխատավորներն ամենակալիվ մասնակցութեան ցույց տան այս գործին: Լենինն ուսուցանում էր, Վոր սոցիալիստական շինարարութեան գործը հաստատուն ու հաջող առաջ կրնախա միայն այն դեպքում, յեթե մենք մեր տնտեսավարման և կառավարման բոլոր ճյուղերի մեջ միլիոնավոր մասսաներին դրավենք: Արհեստակցական միությունները միայ այն դեպքում կարող են սոցիալիստական շինարարութեան գործի համար աշխատավորների լայն մասսաներին նախապատրաստել, նրանց քաշել ու նրանց մասնակցութեանն ստրատիկ այդ գործի մեջ, յեթե դրանք իրենց ամբողջ գործունեությունը, իրենց ամբողջ ապարատը հարմարեցնեն աշխատավորների շահերի առոյշա ու բազմակողմանի սպասարկմանը:

«Ավելի՛ մոտիկ, մասսաներին, ավելի ուշադրութեան դարձրելք նրանց տնտեսական ու կենցաղային շահերին, ավելի լրիվ սպասարկելք նրանց, բորձրացրելք նրանց կուլտուրական մակար-

գալը, — այլ բոլորն առաջիկա պես արհեստակցական միություն-  
հիմնական խնդիրն են հանդիսանում»:

«Ավելի մոտիկ մասսաներին» — հա հիմնական լուրերը,  
վորի իրադրությունն անշուշտ կապահովի մեր հաղթանակը սոցիա-  
լիստական շինարարության ֆրոնտում:

### ԻՆՉՊԵՍ ՄՇԱԿԵԼ III ԳԼՈՒԻԵ

Այս գլխի մշակման հիմնական խնդիրն այն է, վոր, յեւնելով  
այն դրութից, թե մեր յերկիրը՝ պրոլետարիատի զիկատուրայի  
յերկիրը, ունի «լիակատար սոցիալիստական հասարակություն կա-  
ռուցելու համար անհրաժեշտ բոլոր տվյալները» (Լենին), — լու-  
արանել, թե ինչ վիճակի մեջ է մեր ժողովրդատնտեսությունը  
և թե ինչ դեր ունեն միությունները սոցիալիստական շինարարու-  
թյան հաղթանակի համար վարած պայքարի մեջ (Համկոմկուսի (բ)  
XIV համագումարի ու XV Կուսկոնֆերանսի և Արհմիությունների  
VII Համագումարի վորոշումների համաձայն):

Սոցիալիստական շինարարության տվյալ ժամանակաշրջանի,  
վարպես վերակառուցման ժամանակաշրջանի առանձնահատկու-  
թյունները և նրա հիմնական պրոբլեմները (ինդուստրիալիզացիա,  
խնայողության ուժիւմ, գների իջեցում, կոոպերացում, արտա-  
գրության ուսցիոնալիզացիա և այլն) անհրաժեշտ է յուրացնել:  
Դրա հետ միասին պետք է պարզել թե բանվորության լայն մաս-  
սաները միացնող միությունները ինչ մասնակցություն պիտի ու-  
նենան սոցիալիստական շինարարության ամբողջ աշխատանքի մեջ:

Այս հարցերը մշակելիս պետք է նկատի ունենալ խորհրդային  
պետության առանձնահատկությունները և բանվորական մասսա-  
ների ունեցած դերը նրա մեջ (գլուխ I և II): Հարցերի բազմազա-  
նությունն ու բարդությունը հնարավորություն չեն տալիս բազ-  
մակողմանիորեն սպասել զրանց մի գլխի մեջ: Պետք է ի նկատի  
ունենալ, վոր սոցիալիստական շինարարության մեջ միությունների  
ունեցած մասնակցության բազմաթիվ հարցերի կոնկրետ ու ման-  
րամասն լուսարանությունը կտրվի սույն ձեռնարկի հետագա մե-  
ջաբը գլուխների մեջ:

Վերջում պետք է տվյալ գլխից վճռ միայն յեզրակացություն-  
ներ հանել (սոցիալիստական շինարարության ուղիները և արհ-  
միությունների դերն այս խնդրում), այլ և պետք է բոլոր նախորդ

գլուխների յեզրակացությունները ընդհանրացնել: Դրա համար  
պետք է վերհիշել արհմիությունների խնդիրների և բանվորական  
մասսաների գրության զարգացման ետապները կապիտալիզմի և  
պրոլետարիատի զիկատուրայի պայմաններում՝ հիշելով այս կամ  
այն ժամանակաշրջանի վճռ միայն բնույթը, այլ և այդ ժամանա-  
կաշրջանում, արհմիությունների մեջ միացած բանվորական մաս-  
սայի ունեցած դերը նրա ակտիվությունն ու ինքնագործունեյու-  
թյունը:

### ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Կազմել ԽՍՀՄ հիմնական շինարարության համար արված  
դրամական հատկացումների բաշխման գիպրամը:
2. Վերլուծել գների իջեցման վերջին տվյալները:
3. Տվյալ ձեռնարկության մեջ խնայողության ուժիւմ և ուս-  
ցիոնալիզացիա մացնելու արդյունքները քննել:
4. Պատի լրագրում «Ինչպե՞ս է կատարվում ուսցիոնալիզացիան  
մեզ մոտ» վերնագրով հոդված գրել:

### ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ մեզում ասում են, թե մենք վերականգնման ժա-  
մանակաշրջանը ավարտել ենք և մեր ամբողջ ժողովրդատնտեսու-  
թյունը օեկոնստրուկցիայի ժամանակաշրջանն է թեվափոխել:
2. Վո՞րոնք են սոցիալիստական շինարարության հիմնական  
ուղիները մեր յերկրում:
3. Ինչումն է մեր անտեսական շինարարության պլանայնու-  
թյան նշանակությունը:
4. Ինչո՞ւմն են մեր անտեսական աճման առանձնահատկու-  
թյունները:
5. Վորո՞նք են սոցիալիստական շինարարության ուղիները  
գյուղում:
6. Ինչո՞ւմն է մեր յերկրի ինդուստրիալիզացիայի նշանակու-  
թյունը:
7. Ինչո՞ւ պետք է արտագրության ուսցիոնալիզացիա կա-  
տարվի:



8. Ինդուստրիալիզացիան և սոցիոնալիզացիան ինչով են կապ-  
վում աշխատանքի հարցերի հետ :

9. Գները լիցեզման դարձում ի՞նչ մասնակցութիւն են ունե-  
լում միութիւնները :

10. Ի՞նչ են անում միութիւնները՝ արդյունաբերութեան և  
կառավարման մէջ ինտելեկտիւան սեփմն իրազօրծելու համար :

### ԼՐԱՑՈՒՑԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- \* Христоматия по профграмоте, вып. № II.
- \* С. Крылов. — Индустриализация страны, хозяйственные затруднения режим экономии.
- \* А. Андреев. — Индустриализация страны, режим экономии и профсоюзы.

### ԱՎԵԼԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- \* Ленин. — О кооперации (կա հարեղեն թարգմանութիւնը):
- \* Рыков. — Хозяйственное положение страны и задачи партии (доклад на XV партконференции).
- \* Революция ЦК ВКП(б) о снижении цен и т. д. (февраль 1927 г.).
- \* Индустриализация страны и узловые вопросы союзной работы. Сборник, изд. ВЦСПС.
- \*\* Кантор. — Пути индустриализации и новая оппозиция.
- \*\* Яковлев. — Индустриализация и сельское хозяйство.
- \*\* Калинин. — Доклад IV Съезд Советов СССР.
- \*\* Контрольные цифры.



32.290

ԳԻՆԸ 35 ԿՈՄ.